ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ (Յունիս 14-Յուլիս 7-Յուլիս 25, 1915) ԵՒ Ա-ԴՕՆ

ՌՈՒԲԷՆ ՍԱՀԱԿԵԱՆ
rubensahakian@mail.ru

Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին (1914-1917) *թուրքական կառավարութիւնն իրականացնում է Արեւմտեան Հայաստանի եւ Փոքր Ասիայի հայաբնակ գաւառների հայութեան ցեղասպանութիւնը։ Նման դժնդակ պայմաններում հայութիւնը կարողանում է մի շարք վայրերում, ինչպէս օրինակ՝ Վանում եւ համանուն նահանգում, Տարօնում, Շապին Գարահիսարում, Մուսա Լեռան վրայ, Ֆընտըճագում, Ուրֆայում եւ այլ վայրերում դիմելու ինքնապաշտպանութեան*[1]*։ Առաւել յաջող դիմադրութիւն են ցուցաբերում Վանի հայերը, որը զգալի թուով մարդկանց փրկուելու հնարաւորութիւն է տալիս։*

Վանի նահանգապետ Ջեւդէթ բէյն ունենալով մօտ տասն անգամ գերակշիռ ուժեր, հրետանի եւ գնդացիրներ, չի կարողանում կոտրել հայութեան դիմադրութիւնը։ Նրանց պայքարն ու ռուսական բանակի եւ նրա կազմում հայկական կամաւորական խմբերի յառաջացումը նպաստում են որ Վան քաղաքի հայութիւնը յաղթանակած դուրս գայ անհաւասար պայքարից։

1915 *Մայիսի 7ին ռուսական հրամանատարութիւնը Արամ Մանուկեանին, կամ էլ ինչպէս նրան որակել է Վարազդատ Տերոյեանը՝ «Վանի հասարակական հսկային»*[2]*, նշանակում է Վանի եւ ազատագրուած գաւառների ժամանակաւոր կառավարիչ (նահանգապետ)։ Ինչպէս նշում է Վան այցելած Ա-Դօն (Յովհաննէս Գրիգորի Տէր-Մարտիրոսեան*, 1867-1954)՝ «Ռուս բանակի հրամանատարը գնահատեց հայ ժողովուրդի մղած պայքարը ու տարած յաղթանակը եւ հրաւիրեց Վասպուրականը կառավարելու համար Վանի կռիւները ղեկավարող Արամին, լիազօրելով նրան կազմել հայկական ժամանակաւոր կառավարութիւն»[3]։

Վասպուրականում հայկական իշխանութեան հիմնումը պատահական չէր։ Դա արդիւնք էր մի քանի սերունդների հետեւողական գործունէութեան։ Նրանք կաթիլ-կաթիլ, դարեր շարունակ, բնակչութեան շրջանում սերմանել էին պետականութեան գաղափարը։

Կազմակերպւում են ազատագրուած գաւառների եւ Վան քաղաքի կառավարման մարմինները՝ նահանգային խորհուրդը եւ վարչութիւնը, կրթական եւ ոստիկանական տեսչութիւնները, քաղաքապետարանը, գաւառային վարչութիւնը, դատարանը եւն.։

Կարօ Սասունու բնորոշմամբ՝ «Հայոց ճակատագիրը գործնական կեանքի մէջ տնօրինող հաւաքական կամքը Թիֆլիսէն եւ Երեւանէն փոխադրուած էր Վան։ Պատգամը Վանէն կու գար»[4]։

Հայութեան համար Վանը դարձել էր «Աւետեաց երկիր», ուր ձգտում էին օր առաջ հասնել շատերը, որպէսզի անձամբ համոզուեն, որ տեղի հայութիւնը ոչ միայն փրկուել, այլեւ սկսել է արարել հայոց պետականութեան սաղմը՝ Վանի նահանգապետութիւնը։

Վանի նահանգապետութիւնը հարկադրուած էր լուծել բազմաթիւ հիմնախնդիրներ՝ սկսած գաղթականներին իրենց բնակավայրերը տեղափոխելուց, մինչեւ նրանց անվտանգութեան ապահովումը։ Այդ նպատակի համար կազմակերպւում են մի շարք մարմիններ։ Վանը բաժանւում է գաւառների եւ գաւառակների։ Նշանակւում են նրանց ղեկավարները։ 1915 Մայիսի 7-22ին նահանգապետի կողմից կատարւում են հետեւեալ նշանակումները.

Ա. Կալուածական-Գաղթականական Մարմին.- Արտակ Դարբինեան (նախագահ), անդամներ՝ Աւետիս Թերզիբաշեան, Ա. Միրզախանեան, փաստաբան Կարապետ էֆենդի եւ Հ. Ժամագործեան։

Բ. Քաղաքապետութիւն.- Պետրոս Մէօզէեան (նախագահ), անդամներ՝ Վ. Տէր-Պողոսեան, Վահան Մարութեան, Սիմոն Գափամաճեան եւ Ա. Վուվունիկեան։

Գ. Դատարան.- Աղաբէկ էֆենդի (նախագահ), անդամներ՝ Ռուբէն Շատուորեան, Թերջան էֆենդի (գործադիր պաշտօնեայ), Ե. Քաջունի եւ Հրանտ Գալիկեան (դատախազ)։

Դ. Տնտեսական Մարմին.- Գէորգ Ճիտէճեան (նախագահ)։

Ե. Ընդհանուր քննիչ.- Կարապետ էֆենդի Այճեան։

Զ. Նպաստից Յանձնաժողով.- Հ. Մկրտիչեան (նախագահ), անդամներ՝ Գ. Պարիկեան, Փ. Մարութեան, Ա. Պարսամեան, Կ. Գափամաճեան եւ Պ. Թաշճեանը։

Է. Տների Յանձնաժողով.- Մ. Հիւսեան (նախագահ), անդամներ՝ Մ. Երամեան, Ա. Խոճամիրեան եւ փաստաբան Կարապետ էֆենդի։

Ը. Կրթական Մարմին.- Մ. Մինասեան (նախագահ), անդամներ՝ Մ. Նալպանտեան, Ե. Ռշտունեան եւ Ռ. Մելիք-Ադամեան։

Թ. Երկրագործական Մարմին.- Խաչիկ Զենոբեան (նախագահ), անդամներ՝ Ա. Աւետաղայեան, Ռոպինսոն Գլճեան[5]։

Գաւառների եւ գաւառակների Ղեկավար Կազմը

1. **Շահպաղիի գաւառապետութիւն.-** Աբէլ Աղաւնեան (գաւառապետ), Մինաս Օւիկեան (օգնական), Ստեփան Համբարձումեան (թարգմանիչ)։
2. **Արտամետի գաւառապետութիւն.-** Յովհաննէս Գոմէճեան (գաւառապետ), Լ. Մելիք-Դատեան (թարգմանիչ-օգնական)։
3. **Ոստանի գաւառապետութիւն.-** Լեւոն Գաբրիէլեան (գաւառապետ), Զաւէն Կորկոտեան (օգնական), Հ. Փալապէքեան (թարգմանիչ)։
4. **Ալիւրի գաւառապետութիւն.-** Հ. Հիւսեան (գաւառապետ), Ա. Շալճեան (օգնական), Ս. Առաքելեան (թարգմանիչ)։
5. **Կիւսնենցի գաւառապետութիւն.-** Փ. Մարութեան (գաւառապետ)։
6. **Արճէշի գաւառապետութիւն.-** Նշան Ժամագործեան (գաւառապետ), Գ. Թովմասեան (թարգմանիչ)։
7. **Արճակի գաւառապետութիւն.-** Շիրին Եղիազարեան (գաւառապետ), ոստիկանապետ՝ Տաղվերանցի Մկօ։
8. **Գործօթի գաւառապետութիւն.-** Գագիկ Թոխմախեան (գաւառապետ)։

9. Հայոց Ձորի գաւառապետութիւն.- Նշան Նալպանտեան (գաւառապետ), Ն. Մելքեան (ոստիկանապետ), Ս. Համբարեան (թարգմանիչ)։

10. Շատախի գաւառապետութիւն.- Ս. Մեսրոպեան (գաւառապետ), Ա. Պաղտասարեան (ոստիկանապետ)։

11. Ճանիկի գաւառապետութիւն.- Ա. Սեմերճեան (գաւառապետ), Ս. Տէր-Սիմոնեան (ոստիկանապետ)։

Նշենք, որ գաւառապետերի կազմի մի մասը յետագայում փոփոխւում է։ Կատարւում են նոր նշանակումներ։

Այգեստանի եւ Քաղաքամէջի պաշտօնեաների եւ ոստիկանների ընդհանուր թիւը կազմել է 152, իսկ գաւառներինը (ոստիկանութեան հետ միասին)՝ 850 հոգի[6]։

Առաջնահերթ խնդիրներից էր գիւղատնտեսական աշխատանքների վերսկսումը, որը հնարաւորութիւն կը տար ապահովել ոչ միայն բնակչութեան, այլեւ ռուսական զօրքի եւ հայ կամաւորների մատակարարումն անհրաժեշտ մթերքներով։ Սակայն երկրագործական աշխատանքները դժուարանում էին այն պատճառով, որ լեռներում շարունակում էին գործել քրդական զինուած կազմաւորումներ[7], որոնք յարձակումներ էին կատարում հայկական բնակավայրերի վրայ՝ արգելելով հացահատիկի հաւաքումը։

Արամը գիտակցելով, որ բնակչութեան անվտանգութեան ապահովութիւնն առաջնահերթ խնդիրներից է, ձեռնամուխ է լինում ոստիկանական ուժերի կազմակերպմանը։ Նրանց հիմնական խնդիրն էր՝ հայկական, ասորական եւ եզդիների գիւղերի պաշտպանութիւնը։ Կարելի է ենթադրել, որ Արամը ոստիկանական ոյժերի հիմքի վրայ յետագայում ցանկանում էր կազմակերպել բանակային ստորաբաժանումներ։

Վանի նահանգում տարածուած էին տարափոխիկ հիւանդութիւնները, ուստի նահանգապետութիւնը դիմում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե.ին, Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեանը (ԿՀԲԸ), Թիֆլիսի Հայոց Ազգային Բիւրոյին եւ այլ կազմակերպութիւնների, խնդրելով օժանդակել այդ խնդրում։ ԿՀԲԸը Վան է գործուղում լիազօր Աբովեանին, բժիշկներ Համազասպ Օհանջանեանին ու Քոչարեանին, նրանց հետ նաեւ երեք բուժակ եւ մէկ հիւանդապահ[8]։ Յունիսի 20ին Վան է ժամանում Աղթամարի կաթողիկոսական տեղապահ եւ Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Կենտրոնական Յանձնաժողովի ներկայացուցիչ Սահակ արքեպիսկոպոս Այվատեանը[9]։ Նրա նախագահութեամբ կազմւում է «Վասպուրականի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողով»ը, որում ընդգրկւում են Ա. Մանուկեանը, Սիրական Տիգրանեանը, Մարտիրոս Նալբանդեանը, Փանոս Թերլեմեզեանը եւ Յովհաննէս Մկրտիչեանը։ Յանձնաժողովի առաջնահերթ գործը եղել է բուժարան բացել բժիշկ Թաշճեանի[10] գլխաւորութեամբ։ Հեռագրւում է Էջմիածին, խնդրելով շտապ կարգով Վան ուղարկել բժիշկ եւ դեղեր, եւ բացել հիւանդանոց 55 մահճակալով[11]։

Մեծ քանակութեամբ մարդկանց կուտակումը Վանում սրում է քաղաքի առողջապահական վիճակը։ Յունիսի 7ին նահանգապետի օգնական Պարոյր Լեւոնեանը գրում է. «Համաճարակը սաստկանում է։ Անհրաժեշտ են բժիշկներ, ֆելդշէրներ[12], դեղօրայք։ Սով է սկսւում։ Պէտք է միջոցներ ձեռք առնել օգնութիւն հասցնելու համար։ Արամի վարչութիւնը անում է նոյն իսկ անհնարինը։ Խիստ կարիք կայ ինտելիգենտ ուժերի»[13]։

Վանի հայկական իշխանությունը հաշուի առնելով, որ հայ, ասորի, եզդի, ինչպէս նաեւ քուրդ ու թուրք բնակչությունը քիչ թէ շատ վարժուած է օսմանեան օրէնքներին եւ նրա վրայ հիմնուած դատաիրաւական համակարգին, չի գնում կտրուկ եւ արմատական փոփոխությունների։ Նահանգի ղեկավարությունը եւ գլխաւորապէս Արամը, գիտակցում էին, որ օսմանեան օրէնսդրության արմատական վերանայումը կարող է յանգեցնել օրէնսդրական խառնաշփոթի, ուստի հրահանգւում է դատաիրաւական համակարգի աշխատակիցներին ժամանակաւորապէս առաջնորդուել օսմանեան օրէնքներով, իհարկէ, դրանց որոշ դրոյթներ վերանայելով եւ յարմարեցնելով ներկայ պայմաններին։ Կարգադրւում է դատաիրաւական համակարգին, այդ թւում ոստիկանությանը վերաբերող օրէնքները թուրքերէնից թարգմանել հայերէն եւ ներկայացնել նահանգապետարան։ Օրէնքների նախագծերը կամ տարբերակները համապատասխան քննարկումներից եւ փոփոխություններից կամ ամբողջությամբ հաւանություն ստանալուց յետոյ պէտք է դրուէին շրջանառության մէջ։

Մայիսի սկզբներին թուրքական բանակի նահանջից յետոյ Վանի մահմեդական թաղամասում մնացել էին թուրքերի կողմից լքուած 865 թուրք կանայք եւ երեխաներ[14]։ Վանեցիներն, ի տարբերություն թուրքերի, քաղաքացիական բնակչության նկատմամբ որեւէ ոտնձգություն կամ բռնություն չեն կատարում։ Թուրք համաքաղաքացիներին Վանի հայկական իշխանությունը տեղաւորում է ամերիկեան եւ գերմանական միսիոներական հաստատություններում։ Աւելին, քաղաքային ոստիկանությանը յանձնարարւում է ապահովել նրանց անվտանգությունը։ Նահանգապետությունը հաշուառում է նրանց անշարժ գոյքը՝ տներն ու այգիները, ու կազմում դրանց մանրամասն ցուցակը, որը պահպանւում է Հայաստանի Ազգային Արխիւում։

Յունիսի 23ին նահանգապետը եւ շրջանային վարչությունը յատուկ կոչով դիմում են հայրենակիցներին, խնդրելով օժանդակել Վասպուրականի բնակչությանը։ Նահանգապետարանը հայությանը ներկայացնում է արդէն կատարուած աշխատանքների մասին՝ պատրաստւում են հիմնել երկու հիւանդանոց՝ մէկը տարափոխիկ, իսկ միւսը՝ ոչ-վարակիչ հիւանդությունների համար։ Յաջողուել է հաւաքել 10,000 փութ ցորեն, կարիքաւորներին տրուել են 8-10,000 ոչխար եւ 3,000ից աւելի խոշոր եղջերաւոր անասուններ։

Սակայն առաջնահերթը վարակիչ հիւանդությունների դէմ պայքարն է։ Նախատեսւում է նուազագոյնը մէկ բժիշկ՝ երկու գաւառի համար։ Այսինքն՝ մէկ բժիշկը սպասարկելու է երկու հազար հիւանդի։ Միաժամանակ կոչ է արւում երիտասարդությանը՝ նուազագոյնը միքանի ամսով գալ Վասպուրական եւ ուժերն օգտագործել գաղթականներին օգնելու համար։

Հաշուառւում են քաղաքում հայերին պատկանող մրգատու այգիները։ Նրանց թիւը հասնում է 1400ի, սակայն մշակւում են միայն 625ը։ Քաղաքապետարանը քայլեր է ձեռնարկում, որպէսզի անխնամ մնացած այգիները եւս մշակուեն եւ այդ նպատակով առաջարկւում են վարձակալման ցածր գներ[15]։

Հայկական իշխանության գործունէությունը միշտ չէ որ հարթ էր ընթանում։ Նշանակուած պաշտօնեաների մի մասը ընդօրինակած լինելով նախկին յոռի բարքերը, թեթեւամտօրէն էին վերաբերւում իրենց պարտականություններին. լինում էին նաեւ պաշտօնական դիրքի չարաշահման դէպքեր։ Դժուար էր կարճ ժամանակահատուածում փոխել մի շարք մարդկանց մօտ արմատացած

հոգեբանութիւնը, որի վրայ իր կնիքն էր դրել թուրքական երկարատեւ տիրապետութիւնը։ Սակայն կարեւորը դա չէր։ Կային նահանգային ղեկավարութիւն եւ իրենց գործունէութիւնը պարտաճանաչ կատարողներ, որոնց գործունէութիւնն օրինակ էր հանդիսանում միւսների համար։ Իսկ ինչ վերաբերւում է անպարտաճանաչ պաշտօնեաներին, ապա նրանք հեռացւում էին ծառայութիւնից եւ փոխարինւում ուրիշներով[16]։ Առաջին օրինակը ցոյց էր տալիս Արամը, որը կարողացել էր իր շուրջը հաւաքել յիրաւի նուիրեալ համախոհների, առանց հաշուի առնելու նրանց կուսակցական պատկանելիութիւնը եւ սոցիալական ծագումը։ Այսպէս, Վան քաղաքի ոստիկանապետ Դ. Փափազեանը ՀՅԴաշնակցութեան անդամ էր, իսկ փոխոստիկանապետ (ոստիկանապետի օգնական), 1915 Յունիսի 30ից ոստիկանապետի պաշտօնատար Ղ. Խանճեանը նախկին արմենական էր՝ Սահմանադիր-Ռամկավար Կուսակցութեան անդամ։ Այդ կուսակցութեան անդամ էր Արտակ Դարբինեանը, որը յետագայում վարում է Նահանգային Վարչութեան դիւանապետի պաշտօնը։ Դատախազ Հ. Գալիկեանը ՍԴՀԿուսակցութեան անդամ էր։ Արամը այդ նոյն սկզբունքը կիրառում է նաեւ, երբ 1917ի վերջից հանդիսանում է Երեւանի Հայոց Ազգային Խորհրդի ղեկավարը, իսկ 1918 Յուլիսի 24ից՝ Հայաստանի Հանրապետութեան առաջին Ներքին Գործերի Նախարարը։ Նա խնդիրներին մօտենում էր ոչ թէ որպէս քաղաքական, այլ պետական գործիչ։

Վանի նահանգապետութեան գոյութիւնը եւ աստիճանաբար առօրեայ գործունէութեան կարգաւորումը «անհանգստացնում» է ռուսական կառավարութեանը։ Նրանց համար ցանկալի չէր, որ բացառապէս հայերից կազմուած այդ, թէկուզ ռուսական հրամանատարութեանը ենթակայ նահանգը, դառնար ապագայ ինքնավար Հայաստանի հիմքը։ Բացի այդ, կառավարութիւնը խորապէս «անհանգստացած» էր Կովկասեան բանակի յաղթանակներով եւ դա այն դէպքում, երբ ռուսական բանակը ծանր մարտեր էր մղում ռուս-աւստրիական ռազմաճակատում[17]։ 1915ի Յուլիսի 11ին, առանց որեւէ լուրջ եւ հիմնաւոր ռազմական անհրաժեշտութեան Կովկասեան Դ. բանակի զօրամասերը հապճեպ նահանջում են։ Նման հապճեպութիւնը հնարաւորութիւն չի տալիս հայերին կազմակերպել ինքնապաշտպանութիւն։ Տարածւում են չափազանցուած լուրեր մեծաթիւ թուրքական զօրքերի յարձակման մասին։ Իրականում հակառակորդը նման մեծաթիւ ուժեր չունէր։ Թուրքական բանակի գերակշիռ մասը ծանր մարտեր էր մղում Դարդանէլի շրջանում՝ անգլօ-ֆրանսիական ուժերի դէմ, ուստի թուրքերը չէին կարող այդ ժամանակ մեծաթիւ զինուորներ ուղարկել ռուս-թուրքական ռազմաճակատ։ Կարելի է ենթադրել, որ կեղծ նահանջը նպատակ ունէր.-

1. Վերացնել հայկական ինքնավար իշխանութիւնը,
2. Դրդել հակառակորդին՝ խորանալ իր կողմից աւերուած շրջաններ եւ ապա հակայարձակումով շրջապատել եւ ոչնչացնել թուրքերին[18]։

Մեր այս ենթադրութիւնը հաստատւում է համապատասխան փաստերով՝ Օգոստոսի 1ին Վանը վերագրաւելուց յետոյ ռուսներն այլեւս չվերականգնեցին հայկական իշխանութիւնը։

Յուլիսի 23ին գեներալ Ն. Ն. Բարաթովի ռազմարշաւային կորպուսն անցաւ յարձակման։ Յուլիսի 25ին ռուսները գրաւեցին Կլիչ-Գեադուկ լեռնանցքը, Էսմար եւ Դուլթախ գիւղերը։ Նշուած գործողութեան ընթացքում փակուեց

թուրքական զօրքերի նահանջի ճանապարհը Եփրատ գետի աջ ափով։ Սակայն, Կովկասեան Դ. Բանակի ուշացած յարձակումը հնարաւորութիւն չտուեց իրականացնել հակառակորդի ուժերի շրջապատումը[19]։

*

Հրատարակուող փաստաթղթի հեղինակը՝ Յովհաննէս Գրիգորի Տէր-Մարտիրոսեանն (1867-1954) է՝ հայ մտաւորականութեան լաւագոյն ներկայացուցիչներից։ Նա գիտական հասարակութեանը յայտնի է Ա-Դօ անուամբ։

Ա-Դօն հայ հասարակութեան համար անծանօթ դէմք չէր։ Նրա ուսումնասիրութիւնները վերաբերւում են հայ ազատագրական շարժումներին, Արեւմտեան Հայաստանի ընկերային-տնտեսական կացութեանը, վարչական կառուցուածքին, բնակավայրերի եւ բնակչութեան վիճակագրութեանը։ Սակայն խորհրդային տարիներին, ժամանակի նշանաւոր մտաւորականի գործունէութիւնը հիմնականում մնացել է ստուերում։

Ա-Դօն ծնուել է Նոր-Բայազէտում (այժմ՝ ք. Գաւառ՝ ՀՀ Գեղարքունիքի Մարզ)։ Սկզբնական կրթութիւնը ստանում է ծննդավայրում, որտեղ սովորում է միքանի տարի։ 1881 Սեպտեմբերի 4ին Ա-Դօն տեղափոխւում է Երեւան՝ աւագ եղբօր մօտ, աշխատելու նրա խանութում։ 1888 Յունուարի 23ին Մշակ թերթում լոյս է տեսնում Ա-Դոյի առաջին յօդուածը։

Աշխատելուն զուգընթաց, 1889-1891ին նա սովորում է Երեւանի Թեմական Դպրոցում։ 1905 Սեպտեմբերին ընդունւում է Խարկովի Համալսարանի Իրաւաբանական Ֆակուլտէտը որպէս ազատ ունկնդիր, սակայն Ռուսական Յեղափոխութիւնը (1905-1907) եւ ուսանողական յուզումները հնարաւորութիւն չեն տալիս աւարտել ուսումը եւ Ա-Դօն ստիպուած է լինում վերադառնալ Երեւան։

1903ին տպագրւում է Ա-Դոյի, ներկայիս գիտական հասարակայնութեանը համեմատաբար սակաւ յայտնի Մակեդօնիա գրքոյկը[20], որտեղ նա կատարում է հետաքրքիր հետեւութիւն, թէ՝ օսմանեան տիրապետութեան ներքոյ հեծեծող Մակեդոնիայի համար հակաթուրքական ելոյթների ազդակ է հանդիսանում օսմանեան կառավարութեան կողմից 1895 Մայիսի 11ին ընդունուած եւ Հայկական Նահանգներում նախատեսուող Մայիսեան Բարենորոգումների Ծրագիրը[21]։

Ա-Դոյի գրչին է պատկանում նաեւ մէկ այլ գրքոյկ, որը ներկայացնում է 1890ականների կոտորածների հետեւանքով ծննդավայրը լքած Վանի Վիլայէթի Արճէշ գաւառի Ախսրան գիւղի բնակիչ Մուրադին։ Գիտնականը հետեւեալ սահմանումն է տուել գաղթականին. «...գաղթականը նա է, որ զուրկ գլուխը դնելու տեղից մի կտոր հացը կուլ է տալիս արցունքով թրջած, որի բերանից կ՝լսէք Ախ՜ Վաթան... Ախ՜ Էրկիր... [բազմակէտերը հեղինակինն են - Ռ.Ս.][22]»։

1905ի Ռուսական Առաջին Յեղափոխութիւնը հնարաւորութիւն է տալիս ռուս, ինչպէս նաեւ հայ առաջադէմ հասարակայնութեանը տպագրել մինչ այդ գրաքննութեան կողմից արգելուող մի շարք գրքեր։ Ա-Դօն օգտագործում է ընձեռնած հնարաւորութիւնը եւ թղթին է յանձնում Միքայէլ Նալբանդեանին նուիրուած գրքոյկը[23]։

1906ից մինչեւ 1908 Ա-Դօն ուսումնասիրում է ցարական կառավարութեան սադրանքով հրահրուած հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումները (1905-1906)։ Նա 1905 Յուլիսին եղել էր Շարուրի եւ Նախիջեւանի գաւառներում, 1906 Հոկտեմբերին՝ Գանձակի նահանգում։ Արդիւնքում ստեղծում է

մի աշխատութիւն, ուր փաստերի եւ ժամանակի մամուլի հիման վրայ ներկայացնում է այդ տարիների ողբերգական իրադարձութիւնները[24]։

1908 Սեպտեմբերին մեկնում է Ս. Պետերբուրգ եւ ուսանում Հոգէ-նեարդաբանական Ինստիտուտում։ 1909ի սկզբին գալիս է Երեւան եւ որոշում է իրագործել վաղեմի երազանքը՝ ուղեւորութիւն կատարել Արեւմտեան Հայաստան։ Նոյն թուականի Յուլիսի 22ին հատում է ռուս-թուրքական սահմանը եւ անցնում է Ալաշկերտի հովտում գտնուող Բայազէտ քաղաքը։ Ուղեւորութիւնը տեւում է երկու ամիս եւ նա հասցնում է լինել Վանում, Մուշում, Էրզրումում (Կարին) եւ այլ վայրերում։ Ուսումնասիրութիւնների արդիւնքները գիտնականը յանձնում է տպագրութեան[25]։

1909ին Ա-Դօն հեղինակում է Ազատագրական Շարժումը Ռուսաստանում[26] աշխատութիւնը, որի համար ցարական դատարանը նրան դատապարտում է մէկ տարուայ բանտարկութեան, որը կրում է Ներքին Ախտայի (այժմ՝ ք. Հրազդան, ՀՀ Կոտայքի Մարզ) բանտում։

1914ին իշխանութիւնները թոյլատրում են Ա-Դոյին հետազօտական աշխատանքներ կատարել Երեւանի Գիմնազիայի արխիւում եւ նիւթեր հաւաքել Խաչատուր Աբովեանի գործունէութեան վերջին տարիների վերաբերեալ (1843-1848)։ Ուսումնասիրութեան արդիւնքում նա պատրաստում է հետազօտութիւն, որի մի մասը տպագրւում է Բաքուում հրատարակուող Գործ ամսագրի 1914, թիւ V-VI եւ VII-VIII համարներում։ Գիտնականը կարողանում է ճշդել Աբովեանի ծննդեան տարեթիւը՝ 1809։ Յաւօք, Առաջին Համաշխարհային Պատերազմի պատճառով յետագայ հրատարակութիւնը դադարեցւում է։

Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին Ա-Դօն մասնակցում է հայ գաղթականութեան խնդիրներով զբաղուող կազմակերպութիւնների աշխատանքներին։ 1915 Յունիսի 14ից մինչեւ Յուլիսի 24ը, Ա-Դօն գտնւում է Վանում եւ շրջակայ գաւառներում։ Նա եւ իր ընկերներն ականատես են լինում զանգուածային աւերածութիւնների եւ սպանութիւնների հետեւանքներին, որոնք իրականացրել էին թուրք եւ քուրդ ջարդարարները։ Գիտնականն առօրեայ աշխատանքի հետ միասին սկսում է կատարել ուսումնասիրութիւններ, տեղեկութիւններ հաւաքել այս կամ այն բնակավայրի, բնակչութեան կազմի, տեղի ունեցած իրադարձութիւնների մասին։ Ինչպէս վկայում է ժամանակակիցը. «Այս [՝ Վանի նահանգի հայութեան կոտորածը եւ ինքնապաշտպանական մարտերի] ամբողջ անցքի մանրամասն նկարագիրը գրի էր առնում հրատարակելու Ա-Դօն. ուստի եւ աւելորդ եմ համարում հատուկտոր տեղեկութիւններ տալ»[27]։ Այս փաստը վկայում է Ա-Դոյի հայ հասարակութեան մէջ ունեցած գիտական եւ հասարակական հեղինակութեան մասին։

1919ից մինչեւ 1949 Ա-Դօն աշխատում է Հայաստանի Սպառողական Ընկերութիւնների Միութիւնում (Հայկօօպ)։

Ստորեւ ներկայացուող փաստաթուղթը տպագրւում է առաջին անգամ, ուղղագրական եւ կէտադրական որոշ շտկումներով, սակայն ոճը պահպանելով։ Փաստաթղթի վերնագիրը հեղինակինն է։ Բնագիրը պահւում է Հայաստանի Պատմութեան Թանգարանի արխիւում։ Փաստաթղթի պատճէնը մեզ է տրամադրել Ա-Դոյի դուստրը՝ տիկին Ադոլիան, որի համար յայտնում ենք մեր շնորհակալութիւնը։

[1916թ.]
[Երեւան]

Ծանր ժամանակաշրջան էր.... (բազմակէտերը փաստաթղթինն են – Ռ. Ս.)

Առաջին համաշխարհային պատերազմը իր կործանիչ հողմապտոյտի մէջ քաշելով երկրագնդի խոշոր եւ նրանց յարող մանր պետութիւններին, թեւակոխել էր երկրորդ տարին եւ զանգուածային բախումները ամէն տեղ շարունակւում էին խելառ թափով: Խելակորոյս այդ պատերազմի մէջ նետուել էր նաեւ թիւրքականը՝ ձեռնոց նետելով այն Ռուսաստանին, այն Ռուսաստանին, որի ձեռքից նա կրել էր մահացու հարուածներ XIX դարի ընթացքում տեղի ունեցած մի շարք պատերազմներում[28]:

Սեւ Ծովի ափերից սկսած մինչեւ պարսկա-թիւրքական սահմանի ամբողջ տեւողութեամբ ռուսական եւ թիւրքական բանակները բախուելով եւ յետ ու առաջ շարժուելով, հարուածը մեծապէս հասել էր սահմանամերձ թիւրքահայ ժողովրդին, որը տեղահանուած եւ տարագիր ուղիներ բռնած դեգերում էր բնութեան դաժան մէկ ձմռան սառնամանիքներում, մէկ ամառային տապերում՝ կրելով եւ՛ քաղց եւ՛ ծարաւ եւ՛ վարակիչ ախտեր ու մահ:

Այսպէս էր սահմանամերձ թիւրքահայութեան դրութիւնը, սակայն աւելի սոսկալի դրութիւն վիճակուած էր սահմաններից հեռու, խորքերում գտնուող թիւրքահայութեան համար: Ժէօն Թուրքիայի[29] ոճրագործ-բանդիտային կառավարութիւնը Աբդուլ Համիդից[30] ժառանգութիւն ստանալով հայաջինջ քաղաքականութիւնը՝ մէկէն անցաւ այդ դիւային ծրագիրն ի կատար ածելու:

Համաձայն Պոլսից ստացուած գաղտնի հրամանների ամէն տեղ հրապարակ քաշուեցին վայրենի յորդաները ղեկավարութեամբ այն ոճրագործ ցեղապետերի, որոնք մինչեւ այդ որպէս դատուածներ[31], պատերազմի պատրուակի տակ ազատ էին արձակուել: Անսպասելի, աշունը հայ մարդ[իկ] 15 տարեկանից վեր քշում էին բանտերը եւ զօրանոցները, [նրանց] կապկպում էին թոկերով 15-20-25 հոգիներ, քշում էին շէնքերից հեռու հեղեղատներում, գետաբերաններում ու ձորերի մէջ համազարկերով գնդակահարում եւ ապա սուինահար անելով հեռանում էին, նորանոր շարքեր բերելու: Գեղեցիկ կանանց եւ դեռատի աղջիկներին առեւանգում էին ու տանում: Այդ զազիր գործողութիւններից յետոյ մնացեալ մասն զանգուածներով քշում էին դէպի Միջագետքի աւազուտները, որոնցից շատերը անկարող լինելով տանել գերեվարութեան զրկանքները, ընկնում-մեռնում էին զարդարելով իրենց անցած ճանապարհներն իրենց դիակներով: Իսկ կենդանի մնացած շատ փոքր տղաներ ու աղջիկներ վաճառքի էին հանւում Դէր-Զօրի[32] եւ այլ կենտրոնների շուկաներում, որոնք գնում ու տարւում էին իսլամի հետեւողների թիւը բազմացնելու համար[33]: Անպակաս էին նաեւ դէպքերը, երբ մարդիկ, կին, երեխաներ հարիւրներով լցնում էին տների ու գոմերի մէջ ու կենդանի բոցերի մէջ՝ խորովում:

Հայ ժողովրդի դարաւոր պատմութեան այս գերագոյն Սեւ ֆոնի վրայ երեք առկայծող կէտեր, որոնք մխիթարիչ ցոլքեր նետեցին համաժողովրդական վշտի ու մտորումների այդ պահին, հանդիսացան Վանի երկու քաղաքամասերի[34] ու Շատախի[35] ամբողջ մէկ ամիս տեւող պաշարումը եւ հայ

ժողովրդի հերոսական դիմադրութիւնն ու պայքարը, որը եւ յանգեց թիւրք պետութեան ամօթաբեր պարտութեանը ու փախուստին:

Վանի երկու քաղաքամասերը եւ Շատախը յաղթանակել էին, մի քանի տասնեակ հազարաւոր ժողովուրդ փրկուել էր բնաջնջումից եւ գոյութեան իրաւունքն էր շահել իր օրհասական ընդվզումով: Եւ ահա դէպի ազատագրուած Վանը շտապում էին շատերը, վշտահար ու սոսկալի հաղորդումներն այդ ակտով սփոփանք գտնելու համար [sic!]:

Ռուսական բանակը առաջապահ ունենալով հայ կամաւորական գնդերը բաւականին առաջ էր գնացել Էրզրումի, Վանի եւ Բաշկալէի ուղղութիւններով ու թիւրքական բանակը պարտութիւն կրելով ու նահանջելով, սրբում էր ճանապարհին որեւէ կերպ գոյութիւնը պահած հայ ժողովրդի աննշան բեկորները:

Պատմական օրեր էին. Վանում տեղական ուժերից կազմուել էր ժամանակաւոր հայ կառավարութիւն եւ շրջանի ղեկավարութիւնը յանձնարարուած էր նրան[36]:

Ռուսական բանակը հայ կամաւորական գնդերով հանդերձ գործում էր լճի հարաւային ճակատում[37]:

Վանի ազատագրումը առիթ հանդիսացաւ երկրորդ անգամ այցելել խոշոր անցքերի այդ վայրը: Ինձ թելադրում էին երկու հանգամանք՝ նախ տեսնել վեց տարի առաջ այցելածս Վանը ներկայ վիճակում, երկրորդ՝ մօտիկից ծանօթանալ եւ գրի առնել վերջին իրադարձութիւնները:

[1915] Մայիսի 14ին մեկնեցի Երեւանից եւ 17ին հասայ Վան: Քաղաքը մեծ մասամբ աւերուած է ու հրդեհուած, մի քանի հայկական թաղամասեր միայն կանգուն են մնացել: Այդ քաղաքի կենտրոնական մասն էր, ուր եւ դառնում էր ներկայ կեանքը: Նոյն պատկերը կրում էր նաեւ Վանի երկրորդ կէս մասը, հին քաղաքը[38]՝ ատամնաւոր պարիսպներով շրջապատուած, որը ներկայումս միանգամայն ամայի էր:

Ես շրջեցի երկու քաղաքամասերի բոլոր կրակակէտերը, որոնք ցերեկները գնդակոծումների հետեւանքով մեծապէս վնասւում էին, իսկ գիշերները նորից նորոգւում էին ու վերակառուցւում[39] եւ այդ՝ անընդհատ, ամբողջ մէկ ամիս: Ես այցելեցի հերոսական դիմադրութեանը մասնակցողներից աչքի ընկնողներին, այցելեցի հերոսական ակտեր կատարած կանանց, անգամ 10-12 տարեկան տղաներին, որոնք բերդի բարձունքից Քաղաքամէջ նետուած ռումբերին վրայ հասնելով ճգում-հանում էին պատրոյգները, ոչ միայն նրանց անվնաս դարձնելով, այլեւ նրանց մէջ եղած վառօդը փամփուշտների համար գործադրելով:

Ապա հետաքրքրուեցի ժամանակաւոր հայ կառավարութեան ֆունկցիաների ու կառավարման սիստէմի խնդիրներով: Եւ հանդիպում ունեցայ այդ կառավարութեան ղեկավար անձերի հետ: Սկսուել էր մեծ թափով շինարար աշխատանք բոլոր գծերով՝ պատկերը մխիթարական էր:

Աւարտելով Վանում կատարելիք աշխատանքս, առիթ հանդիսացաւ մեկնելու ճակատ, այն ճակատը, ուր գործում էին հայ կամաւորական գնդերը: Ճակատ էին մեկնում կամաւորական գնդերի հետ կապ ունեցող պաշտօնական անձեր՝ 7-8 հոգուց բաղկացած, որոնց թւում նաեւ գրականագէտ-քննադատ Նիկողայոս Աղբալեանը[40]: Եւ ես միացայ այդ խմբին որպէս դիտող: Ինձ տրամադրուեց մէկ ձի եւ Յունիսի 28ին մեկնեցի ճակատ:

Մենք կտրեցինք Վան-Տոսպի, Հայոց Ձորի գաւառների որոշ տարածութիւններ, կտրեցինք նաեւ Գեաւաշ գաւառի լճափնեայ լայնութիւնը, մի ճանապարհ, որի վրայ եւ փոքր ինչ հեռու հետեւեալ պատմական վայրերը.

1. Պատմական Շամիրամի[41] ջրով ոռոգուող բուսազարդ Արտամէտը, որը հռչակուած է ծառապտուղներով եւ առանձնապէս խնձորներով:
2. Ճանապարհից դէպի հարաւ գտնւում է Ձաղար Անշանի [Ձաղար Ս. Աստուածածին] վանքը, որտեղ պահւում է V դարի քաղցրախօս Եղիշէի գերեզմանը:
3. Արտոս լեռան հիւսիսային փէշերի ու Վանի լճի հարաւային ափերի վրայ մէկ բուսազարդ հովտում փռուած է Ոստան աւանը՝ նախկին Ռշտունեաց իշխանի կալուածքն ու ամրոցը, որում ապրում էին քիւրդեր եւ որպէս Գեաւաշի վարչական կենտրոն երկու ամիս առաջ նստում է[ր] թիւրքական կայմակամը, իսկ ներկայում վարում էր գաւառը հայ կառավարութեան գաւառապետը[42]:
4. Աղթամարի կղզին ու նրա դրսի տունը՝ բուսազարդ Ախավանքը[43]՝ նախկին Գագիկ Արծրունու[44] ապարանքն ու ամրոցը, որում գտնւում էր շրջակայ մի շարք գաւառների հոգեւոր կենտրոնը:
5. Ախավանքից ոչ հեռու, դէպի հարաւ-արեւմուտք գտնւում է Նարեկի վանքը, որի ետեւի խորանում պահպանւում է XI դարի բանաստեղծ ու մատենագիր Գրիգոր Նարեկացու գերեզմանը:

Առաջին գիշերն անցկացնելով Ախավանքում, յաջորդ առաւօտեան՝ Յունիսի 29ի ելանք Ախավանքից եւ երկու ժամի չափ փոշոտ ելեւէջներ կտրելով ոտք դրինք լեռնոտ, բեկբեկուն եւ անտառապատ Կարճկանի գաւառը՝ գեղեցիկ բնութիւն, բայց միանգամայն ամայացած:

Ճանապարհը գնալով դառնում է բնաջնջման ցուցադրական: Ոստանում կային Շատախի դիմադրութեան շնորհիւ փրկուած աւելի քան 4000 ժողովուրդ, կային փրկուած ժողովուրդ նաեւ Ախավանքում, բայց շատ քիչ թուով, սակայն Ախավանքից սկսած խօսակցութիւնները դառնում էին բարբարոսութիւնների ու դիակոյտերի շուրջը: Ախավանքում պատմեցին, որ մէկ օր առաջ ալիքները լճի ափ էին նետել 26 տղամարդկանց դիակներ:

Իսկ Ախավանքից դէպի Կարճկան ճանապարհներին հանդիպում ենք հետեւեալ տեսարաններին:

Անգեալուր գիւղի տակով ձգւում էր մի ճանապարհ՝ ճանապարհի ընթացքով հոսում է փոքրիկ առուակ, այդ առուակի ափին ընկած է կանացի դիակ՝ պառկած մէջքի վրայ, ոտները դարձած դէպի արեւելք եւ ձեռքները կրծքի վրայ, ըստ երեւոյթին անցորդ մէկ հայ մարդ այդ անշունչ դիակին տուել է քրիստոնէական ծիսակատարութեանը համաձայն դիրք:

Ս. Յակոբի լեռնանցքի արեւմտեան լանջին նորից ճանապարհի կողքին՝ մէկ կնոջ դիակ՝ պառկած մէջքի վրայ, ոտները կուչ արած, թեւերը տարածուած, մազերը խռիւ, դէմքը այլակերպուած, մտածում ենք, թէ որքան տանջուել է այդ կինը մինչեւ անզգայանալը:

Շեբուդ գիւղի դիմաց մէկ հովտի մէջ գտնւում է կանգնած վիճակում մէկ ջրաղաց, իսկ դրա կողքին աւերակ խանութ եւ այդ աւերակի յատակին կողք-կողքի փռուած են երկու դիակներ՝ մէկը կնոջ դիակ է՝ փէտացած ձեռքի ցուցամատը դէպի արեւմուտք դարձրած, կարծէք ցուցամատը ասում է ձեզ, որ ոճրագործը դէպի այն կողմն է փախել, իսկ միւսը մէկ ամեհի շան դիակ է.

մարդը եւ շունը հաւասարաչափ անուշադրութեան մատնուած, սակայն որպէս արժէք գերադասելի է շան դիակը, չէ՞ որ նրա մորթը կարող է յղփացած մէկի ճարպոտ մարմինը տաքացնել:

Երբ մենք անցնում էինք Կարճկանի գիւղերի կողքով, մէկ ծանր զգացմունք խեղդում էր մեր կոկորդը՝ ամայութիւն ու ամայութիւն, ոչ միայն մարդկային շունչ, ոչ միայն որեւէ արարած չէր նկատւում, այլ նոյնիսկ օդի մէջ թռչուններ անգամ չէին երեւում, մի սոսկալի լռութիւն, խորունկ լռութիւն իջել էր այդ բնութեան վրայ: Եւ մէկէն դատարկ գիւղի ծայրից գազանային ոռնոց բարձրանալով դուրս էին պրծնում ամեհի շներ եւ սարսափած փախչում դէպի լեռները եւ անտառները: Դրանք տուեալ գիւղի ընտանի շներն էին, որոնք կատարուած ոճիրներին ու սոսկումներին ենթարկուած հայ ժողովրդի երկինք հասնող լաց ու կոծին, աղաղակներին ականատես կրելով [լինելով – Ռ.Ս.], իրենք եւս վայրենացել էին եւ քաղցի մատնուած իջնում էին գիւղերը ուտեստ որոնելու համար: Հայկական սոսկումները ազդել էին շների վրայ անգամ, բայց չէին ազդել թիւրք ոճրագործ պետական գազանների վրայ:

Մեր տեսած կնոջ դիակի կողքին ընկած շունը, անշուշտ ցած իջած, կնոջ դիակը տեսած եւ վրայ պրծած մոմենտին անշուշտ պատահել էին զինուած մարդիկ եւ գնդակահարել այդ կենդանուն:

Այս տպաւորութիւնների մտորումների տակ չափչփում էինք Կարճկանի բեկբեկուն ելեւէջները, թողնելով ետեւներս Գեաւաշի վերջին գիւղը՝ Նանկանցը հրդեհուած:

Իջնում ենք մէկ ծովախորշ. այդտեղ ընկած է Զէյվա գիւղը եւ շարունակելով ճանապարհը բարձրանում ենք մէկ դիրքաւոր հարթակ. այստեղ առաջին անգամ հեռուից լսւում են թնդանօթային որոտներ, տեղի ունի [են ունենում – Ռ.Ս.] ուժեղ բախում, բարձրանում են ծխի սիւներ, հրդեհւում են գիւղերը:

Նորից ելեւէջներ եւ առաջներս բացւում է մէկ ընդարձակ խոտաւէտ հովիտ՝ այդ Եղեգիսի դաշտն է, որի հարթակներում գտնւում են Գոմս, Օղուանից բազմամարդ հայաբնակ գիւղերը, իհարկէ բոլորն էլ լքուած ու կողոպտուած: Հովտի մէջ խփուած է մէկ վրան, որի տակ պառկած են մի քանի վիրաւոր զինուորներ, իսկ վրանի կողքին բոցավառւում է մէկ ուժեղ խարոյկ. օրը մթնում է՝ որոշում ենք այդտեղ էլ գիշերել:

Բայց աչքերիս քուն չի մօտենում, չնայած սաստիկ յոգնածութեանս: Երկու օրերի տպաւորութիւնը՝ տեսածս դիակները, գիւղերի ամայութիւնները, անունը մարդկային [sic!] եւ կենդանային շնչերի բացակայութիւնը եւ ընտանի շների վայրենացումը եւ առանձնապէս շրջապատի լռութիւնը, ամայութիւնը գալիս անցնում են յիշողութեանս դաշտով եւ ինձ տիրում է պատրանք, երազանք եւ անէութիւն:

Յունիսի 30ն է, առաւօտեան ժամը 6ը, թողնում ենք Եղեգիսի խոտաւէտ հովիտը եւ վիրաւոր զինուորներին պատսպարող վրանը եւ շարունակում ենք մեր ճանապարհը: Կտրում ենք բաւական տարածութիւն, կատարում ենք մի շարք ելեւէջներ եւ ոտք ենք դնում խոտաւէտ մի տափարակ, դրա զարդն է կազմում մէկ ժայռից բխող սառնորակ աղբիւրը: Այստեղ առաջին անգամ հանդիպում ենք հայ կամաւորական մասերին:

Այստեղ է Անդրանիկն[45] իր գնդով: Նրա տրամադրութիւնը բարձր է, դէմքը առոյգ: Խօսում է պարզ, անպաճոյճ շեշտով: Մէկ օր առաջ բախուել է թշնամու հետ, ջարդել է տուել ու քշել թշնամուն եւ խլել է 4 թնդանօթ:

Այստեղ է մէկ տարիքաւոր՝ Հայկական հարցին նուիրուած անձնաւորութիւն՝ նրան անուանում են Կայծակ Առաքել[46]: Դա պատմում է իր տեսած հետեւեալ տեսարանը:

Եղեգիսից դէպի արեւմուտք գտնւում է Կենդրանց հայ գիւղը, 32 տնից բաղկացած, ծառազարդ, ծառապտուղներով հարուստ գիւղ, գիւղի մէջ՝ ջրաղացի մօտ, մէկ ծառի տակ տեսել է 25 կանանց եւ երեխաների գնդակահարուած ու մորթոտուած դիակներ:

Բացի այդ, նոյն Կայծակ Առաքելը [պատմում է, որ], 25 տուն ունեցող Առանց գիւղում, իհարկէ բոլոր գիւղերն էլ դատարկ ու աւեր, տեսել է 5 եւ 7 տարեկան երեխաներ, որոնցից 5 տարեկանը արդէն մեռած, իսկ 7 տարեկանը թէեւ կենդանի, բայց բոլորովին հիւծուած, դրան վերցնում է Կայծակ Առաքելը, խնամում է եւ ուտեցնում, բայց փրկել նրա կեանքը չի կարողանում, երեք օրից մեռնում է այդ հիւծուած երեխան:

Շարունակում ենք մեր ճանապարհը, շուտով հասնում ենք Վանիկ հայ գիւղին: Այդ գիւղի տակ, արտերի մէջ, խփուած է մէկ վրան՝ այդտեղ են Վարդանը[47], Դրօն[48], Քեռին[49], Խեչօն[50], Միշէն[51] իրենց մասերով [գնդերով – Ռ.Ս.]:

Ցերեկուայ ժամը 12ին հրաման է ստացւում եւ բոլոր զօրամասերը շարժւում են դէպի հիւսիս-արեւմուտք: Ճանապարհը ձգւում է լճափերով եւ երկար պտոյտներ գործելուց յետոյ հասնում ենք Խարձիթ հայկական գիւղին եւ կանգ ենք առնում նրա առաջ փռուած դաշտում: Ճանապարհին, նախքան տեղ հասնելը, մէկ փոսի մեջ կուտակուած են 30ի չափ թշնամու դիակներ և այդտեղից ձգուող դաշտի վրայ տեղ-տեղ պատահում են դարձեալ թշնամու կենտ դիակներ: Այս դաշտում երկու օր առաջ տեղի է ունեցել ընդհարում եւ թիւրքական զօրքերը դիմել են փախուստի:

Այստեղ հետախոյզները բերում են թիւրքական երեք գերիներ՝ խաքի գոյնի հագուստով. դրանք զինուորներ են: Դրանցից մէկը բարձրահասակ, կոպիտ դէմքով, բայց դաժան հայեացքով է. հարցերին չի պատասխանում եւ յամառ լռութիւն է պահում: Միւս երկուսը ընկճուած են, զգում են գերութեան վիճակը եւ պատմում են Բիթլիսում կատարուած ջարդերի ու տեղահանութեան մասին:

Յուլիսի մէկն է, նորից զօրքերի տեղաշարժ, նորից պտոյտներ եւ ելեւէջներ, որոնք յատուկ են Կարճկանի տեղանքին: Ժամը 9 եւ կէսին հասնում ենք Խնձորկէն գիւղին, բայց մինչեւ Պաշուանց հայ գիւղից սկսած ճանապարհին թափուած են փախուստի մատնուած թիւրքական բանակի իրերը՝ վրաններ, շարժական մահճակալներ, աթոռներ, նաւթով լի թիթեղատուփեր, դեղերով լի արկղեր եւ այլ իրեր:

Խնձորկէնը գեղեցիկ ծովախորշի ափին բազմած գիւղ է, դիմացը՝ տարածուած պտղատու պարտէզներ, տները լաւ, դպրոցի շէնք եւ այլն, բայց ամայի: Մտնում ենք տները՝ կողոպտուած են, յատակները փորփրած, խուզարկել են բոլոր ծակուծուկերը եւ տարել են ամէն ինչ: Մէկ տանը կից նկատում ենք ծածկուած դուռ. մօտենում ենք, բացում դուռը՝ ներսում մէկ գեղեցիկ

երինջ մեզ տեսնելով վախի շարժումներ է կատարում եւ եթէ մենք կանգնած չլինէինք դռան շէմքի վրայ, անշուշտ նա դուրս կը թռչէր, փախուստի դիմելով:

Այդ երինջը, որը մի գեղեցկութիւն էր, այնպիսի գեղեցկութիւն, որ լաւ նկարիչը նրանից կը կերտէր ուշագրաւ մի կտաւ, հայեացքը բեւեռել էր մեզ վրայ ու սպասում էր: Այդ հայեացքը թախանձող էր, ներգործող ու հմայող. նա արտայայտում էր սարսափ եւ կարեկցութիւն եւ աղերսանք, միայն բանական մարդը չէ, որ աղէտը դրոշմած իր ճակատին կարեկցութիւն է աղերսում ձեզանից եւ աղերսում է ոչ թէ բառերով կամ խօսքով, այլ իր տեսքով–արտայայտութեամբ: Նման պայմաններում մարդու հետ ապրող կենդանին անմաս չի մնում մասսայական աղէտը տեսնելու[ց], զգալու[ց] եւ արտայայտելու[ց]: Եւ այդ մոմենտին աւերակ ու ամայացած գիւղում միայնակ մնացած այդ կենդանու գեղեցիկ աչքերի ու հայեացքի մէջ ես կարդացի ե՛ւ սարսափ ե՛ւ կարեկցութիւն ե՛ւ աղերսանք:

Երկար դիտելուց յետոյ դուռը նորից ծածկեցինք ամայի գիւղում միակ կենդանի մնացած այդ կենդանու վրայ եւ հեռացանք տանելով յիշողութեանս մէջ դրոշմուած այդ կենդանու ե՛ւ սարսափ ե՛ւ կարեկցութիւն ե՛ւ աղերսանք արտայայտող հայեացքը, միաժամանակ տանելով խղճիս վրայ նստած մի անասելի ծանրութիւն, այն, որ տեսնելով այդ կարեկցութիւնն ու աղերսանքը, անկարող ես վերացնել, անգամ մեղմացնել այն:

Վանի լճի հարաւ-արեւմտեան ծայրի ուղղութեամբ ձգւում է նեղ ու ժայռոտ մէկ ձոր: Այդ ձորի միջով գալիս թափւում է լճի մէջ մէկ գետ՝ դա կոչւում է Թուխ: Այդ ձորը, միաժամանակ Թուխ գետը հանդիսանում են Վանի եւ Բիթլիսի վիլայէթների սահմանը: Բացի այդ, լճից ոչ հեռու, Թուխ գետի ձախ ափին գտնւում է Թուխ գիւղը մէկ փոքրիկ հարթակի վրայ զետեղուած:

Ժամի 2ն է, Անդրանիկն իր զօրամասով եւ 2 լեռնային թնդանօթներով կանգ է առել Թուխ գետի ձորի արեւելեան մէկ բարձրաւանդակի վրայ, որտեղից երեւում է Թուխ գիւղը եւ լճի արեւմտեան ափերի ուղղութեամբ ընկած Ուրթափ գիւղը եւ դրա ետեւում երկարուկ ձգուած բլուրների շարքը: Թշնամին բռնած ունի Ուրթափը եւ բլուրների շարքը:

Անդրանիկի մօտ ենք մենք՝ Վանից եկողներս: Որոշում ենք իջնել ձորը եւ անցնել գետի միւս ափը եւ այցելել Թուխ գիւղը:

Իջնում ենք ձորը, կոխում ենք գետը ու անցնում: Գետը մեծ չէ, բայց փոքր ինչ փռուած է, ծանծաղուտ եւ քարոտ: Գետի այն լայնութեան այն ընթացքի մէջ, որով մենք անցանք, քարերին եւ ջրաբոյսերին դէմ առած ես համբրեցի 7 տղամարդկանց միանգամայն մերկ դիակներ, որոնք ջրի հոսանքից ողողուած ներկայացնում էին ձիւնի կատարեալ սպիտակութիւն: Դրանք Թուխ գիւղի հայ տղամարդկանց դիակներն էին: Այդքան էին մի փոքր տարածութեան վրայ իմ տեսածը: Որքա՜ն էին մեր անցած տեղից վեր եւ վար հոսանքներում ընկածները՝ աստուած գիտէ. թիւրքական եաթաղանը զարկել ու անցել էր անխնայ:

Թողինք այդ տեսարանը եւ բարձրացանք այն հարթակի վրայ, ուր զետեղուած էր Թուխ գիւղը. շնչաւոր էակ չի երեւում, կատարեալ լռութիւն է, այս ու այնտեղ հարթակի վրայ, տների առաջ թափթփուած են տնային իրեր՝ բուրդ, մանածներ, թաղիքներ, անկողիններ, իւղ, պանիր եւ այլն, իսկ հարթակի կենտրոնում կանգնած է մի սայլ՝ նման իրերով բարձուած, որքան որ հնարաւոր է եղել: Որչափ մարդկային աշխատանք է թափուել նրանց վրայ, քա-

նի-քանի ընտանիքներ ու շնչեր ստեղծել են այդ բոլորը եւ մէկ աւերիչ ձեռք եկել, աւերել է ու գնացել:

Մինչդեռ այս ու այն կողմ էին[ք] նայում, յանկարծ դիմացի մէկ փոս ընկած դռնից դուրս եկաւ մէկ պառաւ կին, գլուխը բաց, մազերը խռիւ, դէմքը այլայլուած, հագուստը մաշուած ու կեղտոտ. դուրս եկաւ, արտասովոր հայեացքը ձգեց այս ու այն կողմը եւ կարծէք որեւէ մէկին փնտռում էր եւ երբ մեզ տեսաւ, մէկէն երեսը դարձրեց եւ շտապ ներս մտաւ: Մենք ձայն տուինք, հայերէն կանչեցինք ետեւից՝ մի վախեցիր, արի, կրկնեցինք, բայց զուր, նա չլսեց եւ եթէ լսեց էլ, ետ չեկաւ ու անյայտացաւ մթութեան մէջ: Որպիսի՜ աղէտներ էր տեսել ու ապրել նա՝ տղաներ, հարսներ, թոռներ ի՞նչ էին եղել, ո՞ւր էին տարուել, թերեւս գնդակահարուել ու խողխողուել էին նրա աչքերի առաջ: Նրա մէկէն յայտնուելը, նրա արտասովոր որոնող հայեացքը եւ մէկէն անյայտանալը ոչ մի կասկած չթողին ինձ մէջ, որ այդ կինը խելագարուել էր՝ անկարող լինելով տանել իր սիրելիների խողխողումները:

Մինչդեռ մեր խօսակցութիւնը դառնում էր այդ թշուառ էակի անձնաւորութեան շուրջը, մեր ականջին հասան մեր հետախոյզների զգուշացումը թշնամու մօտիկութեան մասին եւ [մենք] շտապ թողինք ամայի գիւղը, իջանք ցած, կոխեցինք գետն ու անցանք եւ բռնեցինք վերելքը: Երկրորդ անգամ ես համբարեցի գետում տեսածս 7 մերկ սպիտակ դիակները:

Օրը մթնում էր, Անդրանիկը հեռադիտակն աչքերին՝ դիտում էր շրջակայքը: Ուրթափի ետեւում ընկած բլուրների շղթայի բարձունքներում նկատեց թշնամու շարժումներ՝ Անդրանիկը հրաման տուեց առաջ քաշել մէկ թնդանօթը: Թնդանօթաձիգ սպան թնդանօթի բերանը ուղղեց դէպի մատնանշած կէտը եւ փականը շարժեց՝ ռումբը սուրաց եւ ընկաւ բլուրների շղթայի այս կողմը եւ հողի սիւն բարձրացրեց: Թնդանօթը որոտաց երկու անգամ եւս եւ այս անգամ ռումբերն ընկան բլուրների շղթայի բարձրունքների վրայ: Մի փոքր անց շղթայի ամբողջ երկարութեամբ սկսուեց[ին] հրացանային համազարկեր: Այս տեւեց մի քանի րոպէ եւ դադարեց:

Մութը կոխել էր արդէն, այս մեր շրջագայութեան վերջին կէտն էր. թողինք բարձունքը, իջանք Խնձորկէնին մերձ մէկ խոտաւէտ տեղ ու այստեղ էլ գիշերեցինք:

Յուլիսի 2ն է, վերադառնում ենք Վան: Ճանապարհը ձգւում է կամաւորական մասերի հանգիստ առած տեղերով:

Երեկոյեան ժամը 7ն է, կանգ ենք առնում Չոլու գիւղի մօտիկ մէկ խոտաւէտ հովտում: Այդտեղ գտնւում են Դրոյի եւ Համազասպի[52] մասերը: Որոշում ենք այդտեղ գիշերել:

Ընկերներս առանձնացել են մասերի ղեկավարների հետ խորհրդակցութեան: Ես դանդաղ քայլերով շրջում եմ հանգիստ առած զինուորների շարքերով եւ դիտում նրանց ճակատային կենցաղը. հետաքրքիր է այդ, ամէն տեղ խարոյկներ ու խարոյկներ: Որպէս վառելիք հայթայթում են ամայացած գիւղեր[ի]՝ տների ծածկերը եւ դուռ ու լուսամուտները: Խարոյկների վրայ եփում են թիթեղեայ թէյնիկները, զինուորական փոքրիկ կաթսաներով միս, հաճառ եւ այլ ընդեղէններ եւ խարոյկների շուրջը աշխոյժ զրոյցներ, երգեր եւ երբեմն էլ պարեր եւ այլն: Եւ մինչդեռ ես շարունակելով [ուսումնասիրել] այդ առանձնայատուկ կենցաղը, փոխում էի քայլերս, ականջիս են հասնում խօսակցութիւն սարից նոր իջած ինչ որ փախստական հայ ընտանիքի մա-

սին: Հետաքրքրում է ինձ այդ խօսակցութիւնը, փնտռում եւ գտնում եմ այդ ընտանիքը, առաջ եմ քաշում եւ նստեցնում եմ մէկ զինուորական խարոյկի առաջ այնպէս, որ խարոյկի բոցը լուսաւորում է նրանց դէմքերը եւ բացում նրանց հետ իմ սովորական զրոյցը, որից եւ պարզւում է հետեւեալը:

Իմ դիմաց նստած են երեք փրկուած հոգիներ.

1 Բարձրահասակ հայ կնոջ տիպար, 45 տարեկան, անունը Սիմէ

2. Նուազ կազմուածքով աղջիկ՝ 8 տարեկան, անունը Գոզէ

3. Շէկաւուն մազերով երիտասարդ, 20 տարեկան, անունը Գաբրիէլ

Բոլորն էլ գունատ եւ հիւծուած դէմքերով՝ զրկանքներ, քա՜ղց, վախ, սարսափներ ապրած:

Սիմէն եւ Գոզէն մայր ու աղջիկ են, իսկ Գաբրիէլը Սիմէի տեքոր տղան է:

Ապրիլի 6-7ին տեղի է ունեցել Կարճկանի կոտորածը: Սիմէն վերցրած իր աղջիկը փախել է հեռաւոր Բիկրանց քրդաբնակ գիւղը, 3 ամսի չափ կարողացել է իր եւ իր աղջկան կեանքը փրկել եւ լսելով ռուսական բանակի գալը բռնել է աղջկայ ձեռքը եւ ցած է իջել իր[են] պատսպարած գիւղից եւ բանակին հասնելով անսպասելի պատահել է իր տեքոր տղային, որը զօրահաւաքի կապակցութեամբ բանակ է տարուել եւ բանակից փախչելով կարողացել է անխուսափելի կառափնարանից ազատուել:

Այս ընտանիքը Վանիկ գիւղի բնակիչ է: Վանիկն ունէր 15 տուն հայ բնակիչ: Սիմէն եւ Գաբրիէլը նախ տալիս են այդ 15 տան անունները, որը գրի եմ առնում իմ ծոցատետրում եւ ապա անուն [առ] անուն տալիս են այդ 15 ընտանիքից երեքի կազմը, որոնք նոյն ընտանիքի երեք բաժանուած եղբայրների ընտանիքներն են:

Այդ երեք եղբայրներն էին՝ Յակոբը, Աւետիսը եւ Սահակը: Դրանք այս աշխարհը թողել էին բնական մահով նախքան ներկայ դաժան կոտորածները:

Յակոբի ընտանիքը բաղկացած էր հետեւեալ 7 հոգուց.

1. Յակոբի կինը՝ Խերօն՝ 50 տարեկան
2. Մեծ տղան Մանուկը՝ 30 -,,-
3. Երկրորդ տղան Դաւիթը՝ 27 -,,-
4. Մանուկի կինը՝ Նունուշը՝ 26 -,,-
5. -,,- տղան՝ Բաղալը՝ 10 -,,-
6. -,,- աղջիկը՝ Մարօն՝ 8 -,,-
7. -,,- երկրորդ աղջիկը՝ Կտէ՝ 6 -,,-

Աւետիսի ընտանիքը բաղկացած էր հետեւեալ 7 հոգուց.

1. Աւետիսի կինը՝ Սիմէ՝ 45 տարեկան
2. ,,- ա տղան՝ Մուրադը՝ 22 -,,-
3. ,,- բ -,,- Միսակը՝ 19 -,,-
4. ,,- գ -,,- Սահակը՝ 16 -,,-
5. ,,- դ -,,- Կրպօն՝ 12 -,,-
6. ,,- ե -,,- Սիմոնը՝ 10 -,,-
7. ,,- աղջիկը՝ Գոզէն՝ 8 -,,-

Բացի այս 7ը, երկու աղջիկներն էլ ամուսնացել գնացել էին: Մուրադը վաղուց պանդխտել էր եւ գտնուում էր Եալթայում[53], Սիմէն եւ Գոզէն ինձ հետ զրուցող մայր ու աղջիկն էին:

Սահակի ընտանիքը բաղկացած էր հետեւեալ 3 հոգուց.

1. Սահակի կինը՝ Անգինը՝ 40 տարեկան
2. ,,- տղան՝ Գաբրիէլը՝ 20 տարեկան
3. Գաբրիէլի կինը՝ Լուսիկը՝ 18 -,,-
4. Գաբրիէլն ինձ հետ զրուցողն էր:

Այս երեք ընտանիքները բաղկացած էին 17 հոգուց: Դրանցից մէկը գըտնուում էր օտարութեան մէջ՝ մնացեալ 16 հոգուց 3ը ներկաներն էին, իսկ 13ը չկային:

Այդ 13 հոգուց՝

4ը տղամարդ էին, որոնք անշուշտ խողխողուել էին թիւրքական կառափնարաններում:

4ը կանայք, որոնք կամ առեւանգուել են կամ բոցերի մէջ այրուել ու փոշիացել:

Իսկ 5 մանուկ հասակի տղաներ եւ աղջիկներ, որոնք եթէ զոհ չէին գնացել սուրող յորդաների սմբակների տակ, ապա վաճառուել ու տարուել են իսլամի հետեւողների թիւն աւելացնելու համար:

Կառափնարան, առեւանգում, շուկայ հանուած, իսլամացում, հրդեհային բաղնիքներ եւ յորդաների սմբակների տակ փոշիացում, ահա մէկ միլիոն թիւրքահայութեան գողգոթան[54]:

Մէկ ամբողջ ցեղի արիւնը աճուրդի տրուեց, աճուրդի տրուեց մեծ պետութիւնների կողմից, զազիր-վամպիր դիպլոմատիայի կողմից, բարբարոս թիւրք պետութեան հողային եւ շուկային պատառիկներ կորզելու համար, աճուրդ կատարուեց, մէկ ամբողջ երկրամաս ամայացաւ:

Ցցուում է յիշողութեանս մէջ մէկ աղէտալի անցք. անցք, որ տեղի ունեցաւ 1912 թուին: Ամերիկեան մէկ խոշոր նաւ, որ կրում էր «Տիտանիկ» անունը, իր մէջ ընդունելով 3000 ուղեւորներ՝ դուրս եկաւ ծով, ուղղութիւն վերցնելով դէպի եւրոպական նաւահանգիստները: Այդ նաւը ճանապարհի կէսին մէկէն խորտակուեց, իր հետ տանելով 3000 ուղեւորներին[55]:

Այս աղէտը իր ժամանակին այնպիսի յուզմունք առաջ բերեց ամբողջ աշխարհի մամուլի էջերում եւ հասարակական խաւերում, որ շաբաթներ շարունակ լոյս էին տեսնում աղէտի վերաբերեալ մանրամասնութիւններ եւ յուզում հասարակական միտքը:

Պատահել էր տարերային աղէտ, բազմաթիւ մարդիկ զոհ էին գնացել այդ աղէտին, մարդկային չարագործ ձեռքը մասնակից չէր այդ աղէտին: Բայց եւ այնպէս յուզմունքը մեծ էր եւ իւրաքանչիւր բերան աղաղակում էր գտնել մեղաւորներին եւ գնդակահարել նրանց:

Թուրքիայի հայութիւնը ոչ միայն հազար, ոչ միայն 3 տասնեակհազար եւ ոչ միայն 3 հարիւր հազար, այլեւ դրանից էլ 3 անգամ աւելի բազմութիւն զոհ գնաց մարդկային պատմութեան դաժան [այլ] եւս կնիքը դրոշմուած՝ բարբարոս թիւրք պետութեան չարամիտ ոճրագործ, դաւադիր գործողութիւններին:

Ելդզում[56] բազմած Ժէօն ճիւաղների ոճրագործ կառավարութեան գաղտնի հրամանը տեղեր հասաւ թէ չէ, հրապարակ նետուեցին բարբարոս յորդաները, սկսուեցին տղամարդկանց զանգուածային ջարդեր, կանանց ու թերատի աղջիկների առեւանգումներ ու բռնաբարութիւններ, որոշ տեղերում լցրեցին տների ու գոմերի մէջ կին, երեխաներ հարիւրներով եւ դժոխային խարոյկների մէջ մոխիր դարձրին եւ ապա կենդանի մնացած հարիւր հազարաւոր կին, աղջիկ, երեխայ քարաւան-քարաւան քշեցին դէպի Միջագետ-

քի աւազուտները, որի ճանապարհը հանդիսացաւ սոսկումների, հիւծուածների եւ կմախքացածների ընդհանուր գերեզման եւ միաժամանակ Դէր-Զօրի մի քանի կենտրոնների շուկաները արտասովոր աշխուժութիւն ստացան գերի տարուած հայ մանուկների ճուրդի շնորհիւ:

Եւ այս բոլորը կատարուեց բացայայտ, այս բոլորը տեսաւ դիւանագիտական-դիպլոմատիկական աշխարհը, բայց թէ դիւանագիտական աշխարհը կոյր ձեւացաւ, խուլ ձեւացաւ, որովհետեւ այդ Դանթէեան դժոխքը հարկաւոր էր նրան՝ նրան հարկաւոր էր շուկայ, շահոյթ, շահագործում:

Այստեղ վերջակէտ ենք դնում: Ամէն ինչ ասուեց:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Այս մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Ռ. Օ. Սահակեան, *Արեւմտահայութեան Յեղասպանութիւնը եւ Ինքնապաշտպանական Կռիւները 1915 Թուականին*, Երեւան, «Գիտութիւն» Հրատ., 2005:

[2] *Վարագրատ Տերոյեան, Գիտական եւ Հրապարակախօսական Աշխատութիւններ*, առաջ. եւ ծանօթ.՝ Ռ. Օ. Սահակեան, Հրատարակութեան պատրաստեց Ն. Վ. Դերոյեան, Երեւան, Պատմութեան Ինստիտուտ, 2006, էջ 93:

[3] Հայաստանի Պատմութեան Թանգարանի Նոր Եւ Նորագոյն Բաժնի Պատմութեան Ֆոնդ, Ա-Դոյի ֆոնդ, գ. 839/195 (ղ), թ. 30:

[4] Կարօ Սասունի, *Թրքահայաստանը Ա. Աշխարհամարտի Ընթացքին (1914-1918). Թրքահայոց Գաղթաշարժերը եւ Անոնց Դերը՝ Հայաստանի Հանրապետութեան Կազմութեան Մէջ*, Sevan Printing House, Պէյրութ, 1966, էջ 81: Վանի նահանգապետութեան մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Ա-Դօ, *Մեծ Դէպքերը Վասպուրականում 1914-1915 Թուականներին*, Երեւան, Տպարան «Լոյս», 1917. նաեւ՝ Ա. Ասրեան, «Վանի Նահանգապետութեան եւ Ռուսական Կովկասեան Բանակի Հրամանատարութեան Տեսակէտները Նահանգապետութեան Տարածքում Քրդերի Վերաբնակեցման Մասին», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, N 1-2, 2007, էջ 31-36. նաեւ՝ նոյնի՝ *Արամ Մանուկեան. Կեանքը եւ Գործը (Ազատագրական Շարժման եւ Անկախ Պետականութեան Վերականգնման Ուղիներում)*, Երեւան, «Լուսակն» Հրատ., 2008. նաեւ՝ Ռուբէն Սահակեան, *Հայկական Ոստիկանութեան Կազմակերպումը եւ Գործունէութիւնը Վանի Նահանգապետութեան Շրջանում (1915 թ. Մայիսի 8-Յուլիսի 17)*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ 2008. նաեւ՝ *Արամ Մանուկեան: Փաստաթղթերի եւ Նիւթերի Ժողովածու*, գլխ. խմբ. եւ կազմ.՝ Ա. Վիրաբեան, կազմողներ՝ Գ. Աւագեան, Մ. Աւետիսեան, առաջաբանի հեղինակ՝ Ա. Ասրեան, Երեւան, Հայաստանի Ազգային Արխիւ, 2009. նաեւ՝ Ռուբէն Սահակեան, «Արամ Մանուկեանը Վանի Նահանգապետ», *Արամ Մանուկեան. Ազգային եւ Պետական Գործիչը (Յօդուածների Ժողովածու)*, Երեւան Պատմութեան Ինստիտուտ, 2010, էջ 25-51. նաեւ՝ Ա. Հ. Յարութիւնեան, «Վանի Նահանգապետութեան Պարենային Քաղաքականութիւնը (1915 թ. Մայիս-Յուլիս)», *Էջմիածին*, Դ., 2010, էջ 56-61:

[5] Նա 1915 Մայիսի 16ին հրաժարւում է այդ պաշտօնից, պատճառաբանելով, որ իր կրթական ցենզն աւելի բարձր է քան նախագահ Խաչիկ Զենոբեանինը (*Արամ Մանուկեան: Փաստաթղթերի եւ....*, էջ 77-78):

[6] Տերոյան, *Գիտական եւ Հրապարակախօսական*, էջ 326-328:

[7] Ամերիկացի միսիոնէր Քլերընս Աշըրի յուշերի համաձայն, քրդական ցեղերի մեծ մասն արագօրէն ընդունել էին ռուսական հպատակութիւն, սակայն յարմար պահը չէին կորցնում հայերի վրայ յարձակուելու համար (Clarence D. Usher, Grace H. Knapp, *An American Physician in Turkey. A Narrative of Adventures in Peace and War*, Houghton Mifflin Company, Boston, N.Y., 1917, էջ 288):

[8] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 132, թ. 47:
[9] Նոյն, ֆ. 50, ց. 1, գ. 13, թ. 22:
[10] Բաքուի հայութիւնը Վան է ուղարկում բժշկական խումբ՝ բժիշկ Թաշճեանի գլխաւորութեամբ: Խումբը մինչեւ Վան ժամանելը գործում էր Վաղարշապատի շրջանում եւ բժշկական օգնութիւն էր ցոյց տալիս գաղթականութեանը (ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 384, թ. 115):
[11] *Մշակ*, Թիֆլիս, N 142, 3 Յուլիսի 1915. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 17 եւ շրջ.:
[12] Այսինքն Բուժակներ:
[13] *Հորիզոն*, Թիֆլիս, N 127, 10 Յունիսի 1915:
[14] ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 1, թ. 26: Թուրք եւ քուրդ քաղաքացիական բնակչութիւնը գտնուում էր ռուս նշանաւոր գրող Լեւ Տոլստոյի դստեր՝ Ալեքսանդրայի հովանաւորութեան ներքոյ: Կոմսուհին կամաւոր ծառայում էր Վանում տեղակայուած Համառուսաստանեան Քաղաքների Միութեան Կարմիր Խաչի լազարէթում (Usher, Knapp, էջ 292-293. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 239, ց. 1, գ. 1, թ. 26): Աւելին, Վանի նահանգապետութիւնը նաեւ իր վրայ է վերցնում միսիոնէրների մօտ ապաստանած թրքուհիների սնունդի մի մասի հոգածութիւնը: Հայաստանի Ազգային Արխիւում պահպանուել է ամերիկեան միսիոնէրներ Աշըրի եւ Էռնեստ Եարոուի Յունիսի 8ին գրուած նամակը, ուր նրանք խնդրում էին Արամին՝ պարէնով ապահովել իրենց հաստատութիւններում գտնուող թուրք եւ քուրդ կանանց ու երեխաներին: Նրանց կարիքների համար տրամադրւում է տաս ոչխար (ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 9, թ. 13):
[15] *Վան-Տոսպ*, Թիֆլիս, N 30, 19 Յունիսի 1916, էջ 14:
[16] Սահակեան, *Հայկական Ոստիկանութեան Կազմակերպումը*, էջ 37, 46-50, 53, 66:
[17] Այս մասին աւելի մանրամասն տե՛ս մեր գրախօսականը՝ *Բանբեր Հայաստանի Արխիւների*, թիւ 2, 2004, էջ 187-203, Alexandra Barkhturina, *Okraini Rossiyskoi Imperii: Gosudarstvennoe Upravleniye I Natsionalnaya Politika V Godi Pervoy Mirovoy Voyni (1914-1917gg.)* (Ռուսական Կայսրութեան ծայրամասերը. պետական կառավարումը եւ ազգային քաղաքականութիւնը Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին (1914-1918 թթ.), Մոսկուա, Ռոսպէն, 2004, էջ 208-222. http://www.armarchives.am/ UserFiles/ File/02-04.pdf
[18] Կովկասեան Բ. հրածգային բրիգադի հրամանատար գեներալ Թովմաս Նազարբէկեանն իր յուշերում անդրադարձել է այդ «գերակշիռ» ուժերի յարձակմանը: Նա յուշագրում է. «***Ջոկատի շտաբ կապի համար գործուղուել էր Լաբինսկեան կա-զ[ակային] գնդի խորունժրի (ազգանունը չեմ յիշում): Նա յետագայում իմ շտաբի սպաներին պատմել է, երբ Մուշի դաշտից Յուլիսի 9ին Լաբինսկեան Գնդի հրամանատարն ինձ համար զեկուցագիր էր պատրաստում՝ դիմեց սպաներին եւ ասաց, որ պէտք է հարկադրել գեներալ Նազարբեկովին նահանջել: Հարցրեց, թէ որքան թռչուն կայ ծառի վրայ: Ինչ որ մէկը հաշուեց եւ ասաց՝*** 12: ***Դէ այդպէս էլ զեկուցէք, որ Մշոյ դաշտից յարձակւում են*** 12 ***թաբուրներ (գումարտակներ - Ռ.Մ.)***» (ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 48 շրջ.-49):
Թուրքական զօրքի նման թուաքանակը, որը ընկել էր վերը նշուած հրամանատարի կեղծ զեկուցագրի հիմքում, առ այսօր օգտագործւում է ռուսական պատմագրութեան մէջ՝ որպէս արդարացում 1915 Յուլիսի 11ի նահանջի:
[19] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 28, թ. 16 շրջ.:
[20] Ա-Դօ, *Մակեդոնիա,* Ս. Պետերբուրգ, «Պուշկինեան Արագատիպ» Հայկական Տպարան, 1903:
[21] Նոյն, էջ 12-13:
[22] Ա-Դօ, *Հայրենիքի Կարօտը*, Ս. Պետերբուրգ, «Պուշկինեան Տպարան», 1905, էջ 7:
[23] Ա-Դօ, *Միքայէլ Նալբանդեանի Կեանքի Հետաքրքիր Մի Էջ Եւ Բակունինի Նրան Գրած Նամակները*, Երեւան, Տպարան «Լոյս» Արշակ Յակովբեանցի եւ որդիք, 1908:

[24] Ա-Դօ, *Հայ-Թուրքական Ընդհարումը Կովկասում (1905-1906 թ.). (Փաստական, Վիճակագրական, Տեղագրական Լուսաբանութիւններով),* Երեւան, Տպարան Այվազեանց եւ Նազարեանց, 1907:

[25] Ա-Դօ, *Վանի, Բիթլիսի Եւ Էրզրումի Վիլայէթները*, Երեւան, Տպարան «Կուլտուրա», 1912: «Յուշեր Տաճկահայաստանի Ճանապարհորդութիւնից» յօդուածաշարը տպագրւում է *Նոր Հոսանք* թերթում (1913-1914ին), սակայն թերթի փակման պատճառով մնում է անաւարտ: Գիտնականի արխիւում պահպանւում են մի շարք անտիպ ուսումնասիրութիւններ՝ «Հայութեան Երկունքը», 899 մեքենագիր էջ: Այն հիմնականում նուիրուած է 1918ի Մայիսեան հերոսամարտերին եւ Հայաստանի Հանրապետութեան ստեղծմանը, «Ռուսական Ցարերը Եւ Հայկական Հարցը», «Իմ Յուշերը» եւն.: Նշուածներից առաջին երկուսը ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտը պատրաստում է հրատարակութեան:

[26] Ա-Դօ, *Ազատագրական Շարժումը Ռուսաստանում Իր Ծագման Առաջին Օրերից*, Երեւան, Տպարան «Լոյս» Արշակ Յակովբեանցի եւ որդիք, 1908:

[27] *Հովիտ*, Թիֆլիս, N 39, 11 Հոկտեմբերի 1915, էջ 609: Տե՛ս՝ Ա-Դօ, *Մեծ Դէպքերը Վասպուրականում 1914-1915 Թուականներին*, Երեւան, Տպարան «Լոյս», 1917:

[28] ԺԹ. դարի ընթացքում Ռուսաստանը մի քանի անգամ պատերազմել է Թուրքիայի դէմ՝ 1806-1812, 1828-1829, 1853-1856 եւ 1877-1878 թուականներին:

[29] Նկատի ունի երիտթուրքական Միութիւն Եւ Առաջադիմութիւն (Ittihat Ve Terakki) Կուսակցութեանը, որին նաեւ կոչում էին ԺԷօն (թուրքերեն՝Jöntürkler- երիտասարդ) Թուրքեր: Երիտթուրքական այս կուսակցութիւնը հիմնուել է 1889ին: 1908ին երիտթուրքերը գահընկեց արեցին սուլթան Աբդուլ Համիդ Բ.ին եւ հռչակեցին Օսմանեան Թուրքիայում սահմանադրութեան վերականգնումը: Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին՝ 1914-1918, երիտթուրքերը ծրագրեցին եւ իրականացրին օսմանահպատակ հայերի ցեղասպանութիւնը, որին զոհ գնացին 1,5 միլիոն հայեր: 1919-1920ին Կ. Պոլսում տեղի ունեցած դատավարութեան ժամանակ երիտթուրքերի պարագլուխները դատապարտուեցին հեռակայ մահապատժի:

[30] Աբդուլ Համիդ Բ. (1842-1918)՝ Օսմանեան Կայսրութեան սուլթան (1876-1909), յայտնի է նաեւ «Կարմիր սուլթան» անուամբ՝ հայերի եւ այլ քրիստոնեայ ժողովուրդների նկատմամբ զանգուածային կոտորածներ կազմակերպելու համար: 1894-1896՝ նրա դրդմամբ Թուրքիայում տեղի ունեցան հայերի կոտորածներ, որին զոհ գնացին 300 հազար հայեր:

[31] Երիտթուրքերը պատերազմի նախօրեակին բանտերից ազատ արձակեցին քրէական յանցագործներին, որոնցից կազմուեց *Թեշքիլաթը Մահսուսէ*ն (յատուկ կազմակերպութիւնը): Նրանցից կազմուած ջոկատներն օգտագործուեցին հայերին կոտորելու համար: Կազմակերպութիւնում ընդգրկուել են մօտ 40 հազար հոգի:

[32] Դէյր էլ Զօր, անապատային քաղաք Սիրիայում, Եփրատի աջ ափին: 1914-1918 այնտեղ եւ նրա շրջակայքն աքսորուեցին հայերը, որտեղ նրանք ենթարկուեցին ոչ միայն դանդաղ եւ տառապալից սովամահութեան, այլեւ թուրքերի յարձակումներին: Շրջակայ արաբ բնակչութիւնը զգալի օգնութիւն ցուցաբերեց տարագիրներին եւ որոշ թուով հայեր փրկուեցին շնորհիւ այդ օգնութեան:

[33] Աքսորական հայերը Դամասկոսի եւ հարաւային այլ քաղաքներում վաճառուեցին բացառապէս մահմեդականների:

[34] Վանը կազմուած էր երկու թաղամասերից՝ Այգեստանից (23,000 հայ) եւ Քաղաքամէջից (2,300 հայ): Վերջինս համարւում էր քաղաքի գործարար կենտրոնը: Այստեղ էին գտնւում շուկան, խանութները, պահեստները, արհեստանոցները եւն.: Բնակչութիւնը հիմնականում բնակւում էր Այգեստանում: Երկու թաղամասերի միջեւ գտնւում էր թուրքական թաղամասը (18,000 հոգի): 1915 Ապրիլի 7ից մինչեւ Մայիսի 4ը երկու թաղամասերը ինքնապաշտպանական մարտեր մղեցին թուրքական կանոնաւոր զօրքի եւ քրդական ջոկատների դէմ: Շնորհիւ դիմադրութեան եւ

ռուսական Բայազէտի Ջոկատի, որի կազմում էր Հայկական Կամաւորական Արարատեան (Ե.) գունդը, Վանը եւ նահանգի բնակչութեան զգալի մասը փրկուեց կոտորածից:

Ռուսական բանակի Վան շարժուելու նախաձեռնութիւնը պատկանում էր հայ կամաւորներին, քանի որ ռուսական հրամանատարութիւնը նպատակ չունէր Վանը գրաւել: Այդ մասին աւելի մանրամասն տե՛ս՝ David Martirosian, "Vanskaya Operatsia – Epizodei Armyanskoy I Ruskoy Istori" (*Վանի գործողութիւնը՝ հայկական եւ ռուսական պատմութեան դրուագներ*), (http:// www. regnum. ru/ news/ 1161786.html): Ռուսաստանցի հայազգի պատմաբանը մերժելով թուրքական թիւր տեսակէտը, թէ իբր Վանում հայերն ապստամբել են, որպէսզի օգնեն ռուսներին, ռուսական արխիւներից բերած համապատասխան փաստաթղթերով ապացուցում է, որ Կովկասեան բանակն իր առջեւ նպատակ չէր դրել գրաւել Վանը: Ռուսները Վան տանող ճանապարհի վրայ յայտնւում են պատահաբար, երբ հետապնդում էին Դիլիմանի ճակատամարտում պարտութիւն կրած Խալիլ բէյի զօրամիաւորին, որը փախչում էր Վանի ուղղութեամբ: Խալիլը ցանկանում էր միանալ Վանը պաշարած իւրայիններին եւ վերջ տալ հայերի ինքնապաշտպանութեանը: Վկայակոչուած փաստաթղթերով եւ դրանց հիման վրայ կատարած եզրակացութիւններով Մարտիրոսեանը հերքում է խորհրդահայ այն պատմաբանների տեսակէտը, թէ ռուսական զօրքն է ազատագրել Վանը: Այդ մասին կարեւոր տեղեկութիւններ են պահպանուել Արարատեան Գնդի հրամանատար Վարդանի (Սարգիս Մեհրաբեան) անտիպ յուշերում: Նա վկայում է, որ Արարատեան Գունդը, հակառակ Բայազէտի Ջոկատի հրամանատար զօրավար Ա. Նիկոլաեւի, որոշում է յառաջանալ եւ օգնել Վանի պաշտպաններին: Վարդանը վկայում է, որ գնդերի հրամանատարներ Դրօն (Դրաստամատ Կանայեան), Համազասպը (Սրուանձտեան) եւ Քեռին (Արշակ Գաւաֆեան) միակամ էին: Վարդանը ներկայանում է զօրավար Նիկոլաեւին եւ յայտնում իրենց որոշման մասին, ասելով. «***Ձերդ Մեծութիւ՛ն։ Մենք գնում ենք առաջ։ Հայ ժողովուրդը ռուսաց զէնքի, ուժի կարիքը մինչեւ այժմ այնքան չի զգացել, ինչպէս ներկայիս։ Մի օր չուտ կը հասնենք Վան՝ կը փրկենք ժողովրդին, մի օր ուշ կը հասնենք՝ կոտորուած ժողովրդին կը թաղենք։ Մենք առաջ գնալով՝ հեռախօսի կապը կը պահպանեմ Ձեզ հետ, միշտ Ձեզ իրազեկ կը պահեմ ճանապարհին պատահած կռիւների մասին, ես յոյս ունեմ, որ եթէ մեծ ուժերի հանդիպենք եւ Ձեր օգնութեան կարիքը զգանք՝ չէք մերժի մեզ օգնութեան հասնել։ Սորան պատասխան ստացայ, թէ «Կ՝աշխատե՛մ»** (ՀԱԱ, ֆոնդ 402, ցուցակ 2, գործ 10, թերթ 93-94): Բարեբախտաբար, ճանապարհին, բացի մի քանի փոքրիկ ընդհարումներից, կամաւորները որեւէ դիմադրութեան չեն հանդիպում: Մայիսի 5ի երեկոյեան Խեչոյի (Դաշնակցական Խեչօ, Խաչատուր Ամիրեան-Գէորգեան) հեծելավաշտը հասնում է Վան: Նրան դիմաւորում է Արամը: Մայիսի 6ին, առաւօտեան ժամը 6ին, քաղաք են մտնում կամաւորական Բ., իսկ ժամը 12ին՝ Դ. գնդերը, ապա Բայազէտի Ջոկատի հիմնական ուժերը:

35 1915 Ապրիլի 1ին Շատախ գաւառի Կենտրոն Թաղում սկսւում են ինքնապաշտպանական մարտեր: Թաղը, որ բաժանւում էր երեք թաղամասերի՝ Վերին, Ներքին եւ Ջրաղացի, գտնւում էր Սիվտկնա եւ Վերին Տիգրիս գետերի միախառնման եւ երեք խորունկ ձորերի միացման վայրում: Արմենակ Եկարեանի վկայութեամբ, Շատախը յայտնի էր օսմանեան բռնատիրութեան դէմ իր ընդվզումներով: Նկատի ունենալով տեղի հայության յամառ եւ անզիջում պայքարը թուրք եւ քուրդ հարստահարողների դէմ, Եկարեանը գաւառը համեմատում է Զէյթունի հետ (*Յուշեր Արմենակ Եկարեանի*, Գահիրէ, Տպ. Աստղ, 1947, էջ 185): Մայիսի 14ին Թաղ է հասնում Հայկական Կամաւորական Բ. Գունդը՝ Դրոյի հրամանատարութեամբ: Բացի Վանից եւ Շատախից, ինքնապաշտպանական մարտեր են ընթանում նաեւ Գաւաշում, Փեսանդաշտում եւ այլ վայրերում:

[36] 1915 Մայիսի 7ին ռուսական հրամանատարութիւնը Վանի ժամանակաւոր կառավարիչ (նահանգապետ) է նշանակում ազատագրական շարժման ականաւոր գործիչ, ՀՅԴ անդամ Արամ Մանուկեանին (Սարգիս Յովհաննիսեան): Փաստօրէն, հայութիւնը ԺԸ. դարում Սիւնիքի եւ Արցախի հայկական իշխանութիւնների կորստից յետոյ հնարաւորութիւն է ունենում ստեղծել իր ինքնավար մարմինը:

[37] 1915 Յունիսի սկզբին Վանում կազմաւորւում է գեներալ Տրուխինի ջոկատը, որը բաղկացած էր Երեւանեան սահմանապահ գումարտակից, Զաբկալեան Բ. Առանձին Կազակային Բրիգադի 12 հարիւրեակներից, Կովկասեան Լեռնահեծելազօրային Մարտկոցից, Արարատեան եւ Ա. խմբերից: Միաւորումից յետոյ հայ կամաւորների ընդհանուր մարտակազմը հասնում է 5500 հոգու:

[38] Նկատի ունի Քաղաքամէջը:

[39] Վանի ինքնապաշտպանութեան ժամանակ, բացի Մարտական, Կարմիր Խաչի, Զինագործական եւ այլ ստորաբաժանումներից, կազմակերպուել էր Ամրաշէն խումբը՝ մօտ 1800 հոգի, որը սակրաւորական բնոյթի աշխատանքներ էր կատարում: Նրա անդամները պաշարման ընթացքում կառուցում էին դիրքեր, խրամատներ եւ այլ տեսակի ամրութիւններ ու միաժամանակ հակառակորդի կրակի տակ վերականգնում էին թնդանօթների կրակից վնասուած կամ քանդուած դիրքերը:

[40] Նիկոլ Աղբալեան (1873-1947)՝ հայ քաղաքական-պետական գործիչ, գրականագէտ, ՀՅԴ անդամ: Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին գործուն մասնակցութիւն է ունեցել կամաւորական շարժմանը եւ մարտական գործողութիւններին: 1914 Սեպտեմբերի 10ին ընդգրկուել է «Հայ Կամաւոր Խմբերի Կարգադրիչ Մարմին»ի կազմում: 1915 Յուլիսի 10ին նշանակուել է Արարատեան Գնդի աւագ համարզ, Քանաքեռ գիւղում (ներկայումս Երեւանի տարածքում) տեղակայուած պահեստային խմբի հրամանատար: 1918 Մայիսի 28ին Հայաստանի անկախութեան հռչակումից յետոյ ընտրուել է խորհրդարանի անդամ, իսկ 1919ին նշանակուել է Լուսաւորութեան Նախարար: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատուելուց յետոյ, 1921 Փետրուարին ձերբակալուել է, սակայն Փետրուարեան Ապստամբութիւնից յետոյ ազատուել եւ հեռացել է արտասահման: 1930ին բնակուել է Բէյրութում, որտեղ զբաղուել է մանկավարժական գործունէութեամբ (R. Shatirian, “Kratkiy Ocherk Deyatelnosti Armyanskikh Dobrovolcheskikh Drujin 1914-1916gg.„ (համառօտ ակնարկ հայ կամաւորական խմբերի գործունէութեան 1914-1916թթ.), *Armyanskiy Vestnik*, Մոսկուա, թիւ 10-11, 12 Մարտի 1917, էջ 13. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 50, թ. 111):

[41] Նկատի ունի Վանի Թագաւորութեան ժամանակ Մենուա արքայի (Ք.ա. 810-786) կառուցած ջրանցքը, որի երկարութիւնը 42 կմ. է եւ գործում է առ այսօր:

[42] Գաւառապետն էր Լեւոն Գաբրիէլեան, նրա օգնականը՝ Զաւէն Կորկոտեանը, իսկ ռուսերէն թարգմանիչը Հ. Պալապեքեանը:

[43] Ախավանք, Ախավանաց, Ահավանք՝ գիւղ Վասպուրականի Ռշտունիք գաւառում, Վանայ լճի հարաւային ափին, Աղթամար կղզու դիմաց: Ի. դարի սկզբին ունէր 250 հայ բնակիչ: Աղթամար վանքի նաւահանգիստն էր: Պատմիչ Թովմա Արծրունին Ախավանքը յիշատակում է որպէս Աղթամար վանքի կալուածք:

[44] Գագիկ Արծրունի (879-մօտ 943)՝ Վասպուրականի թագաւոր 908ին:

[45] Անդրանիկ (Օզանեան, 1868-1927)՝ հայ ազգային-ազատագրական նշանաւոր գործիչ, ֆիդայի: Մասնակցել է հայդուկային մի շարք կռիւների: Ղեկավարել է 1904ի Սասունի հայութեան ընբոստութիւնը: Բալկանեան Առաջին Պատերազմի ժամանակ (1912 Հոկտեմբերի 9-1913 Մայիսի 30) հայկական առանձին կամաւորական վաշտի հրամանատար Գարեգին Նժդեհի տեղակալ: Առաջին Համաշխարհային Պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատում Հայկական Ա. Կամաւորական Խմբի հրամանատար: 1918 Յունուարին նշանակուել է Հայկական բանակային կորպուսի դիւիզիայի հրամանատար: Նոյն ամսում նրան շնորհուել է ռուսական բա-

նակի գեներալ-մայորի կոչում: ՀՀ կառավարութեան հետ ունեցած տարակարծութիւնների պատճառով 1919ին հեռանում է արտասահման:

46 Կայծակ Առաքել (Տիգրան Աբաջեան, 1869-1916)՝ հայ ազատագրական շարժման գործիչ, ֆիդայի, ՀՅԴ անդամ: 1904ին Սասունի ապստամբութեան մասնակից: 1905-1906՝ հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումների ժամանակ գործել է Երեւանում: Մասնակցել է պարսկական յեղափոխութեանը (1905-1911): Մասնակցել է 1915 Ապրիլի 7ից մինչեւ Մայիսի 4ը Վանի Այգեստան թաղամասի ինքնապաշտպանութեանը, եղել է Վանի Զինուորական Մարմնի անդամ: 1916-1917՝ Երզնկայում զբաղուել է հայ գաղթականների օգնութեան եւ թուրքերի մօտ բռնի պահուող հայ երեխաների, կանանց եւ աղջիկների փրկութեամբ:

47 Սարգիս Մեհրաբեան (Խանասորի Վարդան, ?-1943)՝ հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: 1890ին աշխուժ մասնակցութիւն է ունեցել հայ-դուկային շարժմանը: 1896ի գարնանը ղեկավարել է Շատախի ինքնապաշտպանութիւնը: 1897ին գլխաւորել է Խանասորի արշաւանքը: 1905-1906՝ հայ-թաթարական բախումների ժամանակ ղեկավարել է Ղարաբաղի հայութեան ինքնապաշտպանական կռիւները: Պատերազմի սկզբում գլխաւորել է Հայկական Ե. Կամաւորական Գունդը, որը զէնք չլինելու պատճառով չի մասնակցել մարտական գործողութիւններին: 1915 Ապրիլի 1ից գլխաւորել է Արարատեան Գունդը: Կամաւորական գնդերի լուծարումից յետոյ հեռացել է քաղաքական գործունէութիւնից: Ունի անտիպ յուշեր:

48 Դրօ (Դրաստամատ Կանայեան, 1884-1956)՝ նշանաւոր ռազմական, քաղաքական եւ պետական գործիչ: 1914-1916՝ Հայկական Բ. կամաւորական խմբի հրամանատար: 1917 Դեկտեմբերին նշանակուել է Հայկական Ազգային Կորպուսի կոմիսար: 1918 Մայիսին ղեկավարել է Բաշ Ապարանի ճակատամարտը: 1920 Նոյեմբերին նշանակուել է ՀՀ Զինուորական Նախարար: 1920 Դեկտեմբերի 2ին Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, որպէս անցման շրջանի զինուած ուժերի հրամանատար, ղեկավարել է իշխանութիւնը մինչեւ Յեղկոմի Երեւան ժամանելը: 1923ին հեռացել է արտասահման:

49 Քեռի (Արշակ Գաւաֆեան, 1858-1916)՝ հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: Մասնակցել է 1904ի Սասունի ինքնապաշտպանութեանը եւ 1905-1906՝ հայ-թաթարական ընդհարումներին: 1908ին պարսկական յեղափոխութեան ժամանակ Եփրեմ Խան Դաւթեանի օգնականն էր: 1914-1916՝ գլխաւորել է Հայկական Դ. Կամաւորական Գունդը: Աչքի է ընկել Սարիղամիշի Ճակատամարտի ժամանակ, որի ընթացքում իրեն դրսեւորել է որպէս հմուտ հրամանատար: Զոհուել է 1916ին Ռեւանդուզ քաղաքի մօտ տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ:

50 Խեչօ, Դաշնակցական Խեչօ (Խաչատուր Ամիրեան-Գէորգեան, 1868-1915)՝ հայ ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: 1897ին մասնակցել է Խանասորի արշաւանքին եւ 1905-1911՝ պարսկական յեղափոխութեանը: Առաջին Համաշխարհային Պատերազմը սկսելուց յետոյ զինուորագրուել է հայ կամաւորական շարժմանը, սկզբում եղել է Դրոյի օգնականը, իսկ 1915 Ապրիլի 1ին Արարատեան Գնդի կազմաւորուելուց յետոյ նշանակուել է Վարդանի տեղակալ եւ հեծելավաշտի հրամանատար: Զոհուել է 1915 Յուլիսի 6ին: Ինչպէս նշում է Ս. Վրացեանը. «***Խեչոյի մահը, կարծես, խորհրդանիշ եղաւ: Նրանից յետոյ մենք ուրախ օրեր չտեսանք***» (*Հորիզոն*, Թիֆլիս, N 2, 3 Յունուարի, 1916):

51 Միքայէլ Արզումանեան՞:

52 Համազասպ Սրուանձտեան (1873-1921) հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: 1905-1906՝ հայ-թաթարական ընդհարումների ժամանակ կազմակերպել է Ղարաբաղի, մասնաւորապէս Գանձակի հայութեան ինքնապաշտպանութիւնը: 1908ին ձերբակալուել է ռուսական իշխանութիւնների կողմից յօրին-

ուած «Դաշնակցութեան գործի» հետ կապուած եւ դատապարտուել է 15 տարուայ աքսորի, որը կրելու էր Սիբիրում: 1913ին յաջողուել է փախչել աքսորավայրից: ՀՅԴ Ը. Ընդհանուր Ժողովի պատգամաւոր (Գումարուած 1914ի Յուլիսի 25-Օգոստոս 17): Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին եղել է Գ. Կամաւորական Գնդի հրամանատար: Մասնակցել է 1918ի Բաքուի հայութեան պաշտպանութեանը: Հայաստանի Հանրապետութեան կազմաւորումից յետոյ նշանակուել է Նոր Բայազէտում (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գաւառ) տեղակայուած զօրքերի հրամանատար: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատուելուց յետոյ ձերբակալուել եւ 1921 փետրուարին սպաննուել է Երեւանի բանտում:

[53] Եալթա՝ քաղաք Ուկրաինայում, Սեւ Ծովի Ղրիմի թերակղզու հարաւային ափին:

[54] Կարծում ենէ, որ Ա-Դօն այս թուաքանակի մէջ չի մտցրել Ալաշկերտի հովտի, Պարսկահայքի (Հիւսիսային Ատրպատական) հայութեանը, քանի որ նշուած շրջանները համարւում էին Արեւելեան Հայաստան: 1915-1916ին դեռեւս ամբողջութեամբ յայտնի չէր հայութեանը հասցուած արհաւիրքի ողջ ծաւալը:

[55] 1914 Ապրիլի 14ին «Տիտանիկ» շոգենաւը, որը Սաութհեմփտընից (Մեծն Բրիտանիա) գնում էր դէպի Նիւ Եորք, բախւում է մի հսկայ սառցաբեկորի, որի հետեւանքով 1316 ուղեւորից եւ անձնակազմի 908 անդամից փրկւում են միայն 711 հոգի:

[56] Եըլդըզ (թուրք. Yildiz Sarayi՝ աստղային պալատ), սուլթան Աբդուլ Համիդ Բ.ի նստավայրը:

ASPECTS OF THE HISTORY OF THE ADMINISTRATION OF VAN
(JUNE 14-JULY 7-JULY 25, 1915) AND A-DO
(Summary)

RUBEN SAHAKYAN
rubensahakian@mail.ru

During WWI the Ottoman Empire launched its plans of massive extermination and deportation and carried out its genocidal policy against the Ottoman Armenians. In reaction to these acts, certain Armenian towns and cities of Western Armenia and Asia Minor took up arms in self-defense.

The population of the city of Van was the first to take up arms against the Turks. The defense of the city extended from April 7 to May 4, 1915. Eventually they were rescued by the Armenian volunteer troops of the Russian Army, who were the first to arrive to Van.

On May 7, the Russian Army command appointed Aram Manoogian as administrator of Van and its provinces. In a short period Manoogian established a regional administration and its subsidiaries, which won the trust of the population. Soon Eastern Armenian scholars with administrative experience volunteered to work in the municipality of Van. In recruiting administrators Manoogian prioritized competence over partisanship and social stature.

The author notes that since the disappearance of the Armenian princedoms of Sunik and Artsakh in the 18th century, this was the first time Armenians had had the chance to establish a political entity in an area exclusively inhabited by Armenians, as the Turks had left the area. Nonetheless, the Russian authorities were unhappy with the activities of the Armenian administration and particularly concerned with the fact that Van could become the center of an Armenian autonomous region.

On July 11, 1915 the Russian authorities ordered the retreat of the army, for no real reason. The retreat occurred haphazardly, and the Armenian authorities had no time to organize the defense of the city. The Armenians were left with no choice but to leave the city and take refuge in Eastern Armenia. The experience gained by Manoogian during this period became an asset for him as he later on assumed the *de facto* leadership of the Yerevan Armenian National Council and, as of July 1918, held the post of Interior Minister of the Republic of Armenia.

Against the backdrop of these developments Sahakian brings to light the eye-witness account of Hovhannes Der Krikorian (1867-1954), one of the best Armenian intellectuals of the time. Der Krikorian, known to scholarly circles by the name of A-Do, extensively researched Armenian liberation movements, socio-economic conditions, the administrative structure as well as gathering statistics on the population and settlements of Western Armenia. He personally went through the region of Van, registering and taking and took details of the resistance fights as well as details on the massive massacres of the Armenians, and published them as a research book in 1917.